Շուշան Վարդանյան

Հպանցիկ դիտարկումներ

Միւնխէն - Երեւան
2012

Հայկական Հարցերի Հաստատութիւն
Institut für Armenische Fragen e.V
Institute for Armenian Studies
Marsstrasse 14b. 80335 München

ՀՏԴ 891.981 Վարդանյան
ԳՄԴ 84Հ
Վ 301

Վարդանյան Շուշան
Վ 301 Հպանցիկ դիտարկումներ / Շ. Վարդանյան. - Եր.:
«Բեկոր-հրատ», 2012. - 48 էջ:

ՀՏԴ 891.981 Վարդանյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978-99941-876-4-5 © Շուշան Վարդանյան, 2012

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Շուշան Վարդանեանը ծնուել է եւ համալսարանական կրթութիւնը ստացել է Երեւանում: Երկու տարի Գերմանիայում աշխատելուց յետոյ տեղափոխուել է ԱՄՆ եւ ներկայիս բնակւում է այնտեղ:

Տպագրել է հայրենական եւ Սփիւռքի մամուլում: 1993 թւականից Հայկական Հարցերի Հաստատութեան անդամ է:

Այս գրքոյկը հպանցիկ դիտարկումների եւ մտորումների մի շարք է, որտեղ հեղինակն աշխարհաընկալման նոր մօտեցմամբ է մեզ ներկայացնում իր շրջապատի իրերն ու առարկաները: Նրա վառ երեւակայութեամբ օժտուած գրչի տակ մարդեղանում են բնութեան ինչպէս նաեւ մեզ յայտնի ու անյայտ երեւոյթները:

Մերթ մանկան անկեղծութեամբ, մերթ էլ սահմռկեցուցիչ նկարագրութիւններով համեմուած այս մտապատումները մէկ անգամ եւս մեզ առիթ են տալիս խորհելու կեանքի ու մահուան, չարի ու բարու մասին: Այն մասն է մարդկութեանը ուղղուած յուսահատ մի ճիչի, որը լսելիս ակամայ յետադարձ հայեացք ենք գցում մեր ապրած կեանքին եւ փորձում նորովի իմաստաւորել այն:

Հայկական Հարցերի Հաստատութեան
Նախագահութիւն

2012 թ Միւնխէն

ԱՌԱՋԱԲԱՆ

Ի սկզբանե լույսը և խավարը միաձույլ էին:

Խավարն այնքան էր սիրում լույսը, որ նրան գամված էր պահում իր ներսում:

Լույսը, որ նաև անսահման սեր էր, ձգտում էր ձերբազատվել խավարի կապանքներից, որպեսզի սկիզբ դնի նոր, անսահման կյանքերի:

Երբ լույսը և խավարը վերջապես զատվեցին, զատվեցին նաև այս և անդր աշխարհները:

Լույսից ծնվեցին հոգիները:

Զրկված լինելով լույսից, խավարն անձև էր ու պարապ, կարծես գոյություն իսկ չուներ:

Խավարը, որ զրկվել էր ամեն բանից, լույսից զատվելու պահից սկսած ողջ ուժգնությամբ դեպի իրեն էր ձգում լույսը:

Երբ մարում են մարդկային հոգին անմնացորդ սիրով ջերմացնող կանթեղները, տեղափոխվելով անդրաշխարհ՝ լույսը և խավարը նորից գրկախառնվում են և անդրաշխարհը ստանում է ձև ու բովանդակություն:

Հոգու աչքերի առջև սկսում է անէանալ երկու աշխարհները անջրպետող շղարշը:

Լույսն ու մութը սկսում են նրան շշնջալ իրենց նախատիեզերական միասնության գաղտնիքները:

Ի վերջո, խավարը մարում է լույս-սիրո բոլոր կանթեղները՝ վերստին ամփոփելով լույսն իր մեջ:

Լույսն ու խավարը վերստին դառնում են մեկ:

Լույս–Սերն անդադրում փորձում է զատվել խավարից և արարել նոր լուսավոր աշխարհներ՝ շրջելով լինելիության և անէացման հավիտենական անիվը:

Սիրելի ընթերցող, ձեզ ներկայացվող ստեղծագործություններում տեղ են գտել լույսի և խավարի անդադրում պայքարի արտացոլումները, որոնք հեղինակի հոգին օգտագործելով որպես միջոց, սև–խավար թանաքով հանձնվել են լուսավոր–ճերմակ թղթին:

Ռ. Չ.

ՀՊԱՆՑԻԿ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

***

Ցավի մոլագար կծկումների ներքո ձյուն էր մաղում: Ձյունը պատել էր ողջ մթնշաղը, իսկ տիեզերական ճիչը վայրէջք էր կատարում ամպերին…

Ամպհովանին մեղմ սահում էր երկնակամարով և ծածկում ողջ բնությունը: Երկրի գնդաձև զանգվածը պարուրված էր անորոշության դառը կսկիծով: Կորցրած աշխարհի սկիզբն ու վերջը՝ ծառերը թափառում էին ամպհովանու ներքո և փնտրում երկրի սառած բիբը:

Իսկ բիբը ծալապատիկ կծկված գրկել էր իր վիշտը և հոնգուրհոնգուր լաց էր լինում: Նա արտասվում էր, քանզի այլևս հոգնել էր իր սառած վիճակից, հոգնել էր սեփական սառած հայացքից և ձյան սառնությունից:

***

Կորստի պատրանքը պարուրվեց մշուշով, հետո վշտից ճաքեց մշուշապատ կեղևը, և ցավի ոգին դուրս թռավ ոռնալով:

…Եվ ծնվեց Ցավը:

Ցավը ծնեց մարդուն, մարդը ծնեց իր զավակին, քանզի անիծվել էր:

Մարդը ծնվեց ցավից և ցավը սրտում հեռացավ այս աշխարհից: Եվ այդ ցավն այնքան մեծացավ, որ ի վերջո, վերածվեց վշտի, մեծ համամարդկային վշտի:

…Եվ ամենուր հոսում էին միայն վշտի գետեր ու ջրվեժներ, որպեսզի մի օր վերջնականապես խեղդեն վշտից խուսափող մարդուն:

***

Օտար երկրներից մեկում ճամփորդում էին հայի վշտացած աչքերը: Դրանք տխուր նայում էին մարդկանց օտար, դատարկ ու անթափանց հայացքներին և վշտից ուզում էին ոռնալ: Սակայն լինելով մարդու ամենախոսուն մասը, այդպես էլ անհաղորդ մնացին նոր քաղաքակրթությանը: Միայն երբեմն, ժամանակ առ ժամանակ, իրենց վիշտն էին արտայայտում ինչ-որ աղի կաթիլների տեսքով, թեև տենչում էին ամբողջովին արնաքամ լինել:

***

Ագռավները պտտվում էին այս խաղաղ քաղաքի վրայով և իզուր դիակներ որոնում:

…Դիակներ գտնելու համար նրանք պէտք է գաղթեին…

***

Կորուստներիս ցավը սավառնում էր երկնքում, որպեսզի ամբողջովին պատի հոգիս: Սակայն այլևս վերջ բոլոր կորուստներին…

Ցավն ինչ հնազանդ գտնվեց. երնե՜կ նրան:

***

Քեզ գտնելու համար ստեղծեցի կորստիդ պատրանքը, և այդ պատրանքը թռավ գնաց հոգիների աշխարհից էլ այն կողմ:

Այդ իրականությունն էր, որ պատռեց պատրանքի քողը, և հոգիս մնաց որբացած: Իսկ որբացնող ոգիները իրենց գործն ավարտած համարելով՝ հեռացան մարդկանց աշխարհից:

Պատրանքը ցրվեց, և աշխարհի վերջին հոգին, որ շատ ըմբոստ էր ու թվացյալ էր միայն որբացած, չհանդուրժեց իր կորուստը: Նա խենթացնող ձայնով շշնջում և ամենուր փնտրում էր քեզ, միայն քեզ: Փնտրում էր՝ այլևս երբեք չկորցնելու համար:

***

Հնազանդության լուսապսակ իջեցրիր իմ գլխին, իսկ ես չհասկացա սրբագործվելուս իմաստը: Եթե դեռ ուշ չէ՞, վերադարձրու գեթ լուսապսակի շողերից մեկը՝ ամենանվիրականը: Ես քոնն եմ հավետ:

***

Երջանկությունը ծիծաղի վերածված սավառնում էր տիեզերքում, մինչդեռ կիտրոնահամը կոտրեց տիեզերքի ողջ վայելումը:

…Խեղճ ու միամիտ մարդիկ…

***

Օրհնված երանությունը թափառում էր աշխարհով մեկ և իր տեղը չէր գտնում: Այսպես դարեր, հազարամյակներ անցան, և երանությունը, որ օրհնանքը շուրթերին փնտրում էր իրեն կարոտակեզ սպասող որևէ մէկին, հանկարծ հասկացավ մարդկանց աշխարհում թափառելու իր անհեթեթ ձգտումները: Նա դառնացած հեռացավ այդ աշխարհից, քանզի աննպատակ թափառելուց երանելի օրհնանքն արդեն չորացել էր նրա շուրթերին:

***

Շղթայակապ ալիքներն իզուր էին զարնվում ափին: Թերևս հազար հինգ հարյուր տարի էր անհրաժեշտ, որպէսզի վերջնականապես ձերբազատվեին շղթաներից, մինչդեռ մաշվելու տենչից շղթաներն ակամա ավելի էին ամրանում, դառնալով մեկ ամրակուռ բազուկ՝ ընդդեմ ալիքների:

Եվ փշրվելով շղթաներին՝ հանուն նրանց ազատության, արդեն գուցե հազար տարի խորտակվում էին այսպես՝ փրփուրը բերաններին:

***

Արցունքի կաթիլը մեծացավ փոքրիկ աղջկա աչքերում, մեծացավ, հետո դողդողալով ընկավ ցած: Ուշքի եկավ, և ինքն էլ չհասկացավ, թե ինչու էր ուզում լաց լինել. երևի վշտից, թեև այդպես էլ չհիշեց, թե որն էր իր վիշտը: Ախր նա լացից էր ծնվել: Առհասարակ, շատ էր սիրում ճամփորդել մարդկանց աչքերով, հատկապես փոքրիկ աղջիների: Նա ուղղակի ուզում էր առավոտից մինչև ուշ գիշեր նստել նրանց աչքերում և թախծոտ հայացքով նայել աշխարհին ու մարդկանց: Բայց…

Բայց ավա՜ղ, փոքրիկ աղջկա աչքերից գլորվելով՝ խառնվեց մեծ արցունքին, ստեղծելու համար աշխարհի ամենամեծ արցունքը՝ Համաշխարհային ջրհեղեղը:

***

Հայելու մեջ փնտրում էի քո դեմքը, բայց իմը գտա. ամայացած ու օտար մի դեմք, որ հեռավոր հիշողությունն էր նախասկզբնական ժամանակների: Խունացած դեմքն այնքան օտար թվաց, որ մի պահ փորձեցի սրբել այն հայելու մակերեսից: Բայց անհնար էր:

Այն խորապես էր դաջվել հայելու հոգու մակերևույթին:

***

Սեփական մարմնի մահացման պատկերացումից ուղեղը ցնցվեց: Նրա հյուսվածքի ծալքերից վշտի արյուն էր հոսում: Բայց ավաղ, այն ներս էր հոսում, և ոչ ոք չտեսավ ուղեղի ցավը:

***

Ամայի գերեզմանատանը դիակներն իզուր էին թափառում մեռելներ գտնելու: Չէ՞ որ ասված է. «Թող մեռածներն իրենց մեռելներին թաղեն»:

…Իսկ խաղաղ գերեզմանատանը մեռելներ չկային…

***

Ուղեղի ծալքերը ձանձրույթից ուռճացան, հետո զայրույթից կնճռոտվեցին և մահամերձ վիճակում սմքեցին անծանոթ գլխի գանգատուփում: Մարդիկ նրա տիրոջը իմաստուն համարելով, երկրպագեցին՝ ուղեղի ծալքերը նույնացնելով խելքի հետ: Մինչդեռ, ուղեղն ընդամենը ձանձրույթից էր մեռնում:

Պատկերացրեք, թե ինչ կլիներ մարդկանց գլխի հետ, եթե ուղեղի ծալքերը հանկարծ չձանձրանային և որոշեին օգտագործել իրենց ողջ կարողությունը:

***

Տեր իմ, որդուդ նկարը, որ կախված էր մի անհավատի տան պատից, խունացած էր ու կնճռոտված: Եվ այդ կնճռոտված զայրույթի միջից ինձ էր նայում մարդկության դատաստանը:

Թեև մարմնացումն էր նա համամարդկային անսահման սիրո, խորին տխրություն էր ծորում նրա աչքերից, որն ավա՜ղ, վերջին օրվա դաժան տեսլականն էր կանխագուշակում:

***

Մարդիկ սարսափով են սպասում աշխարհի կործանմանը. հավատացյալները շտապում են ապաշխարհության, անհավատները՝ հավատի գալիս, մինչդեռ շատերի համար արդեն ամեն մի անցնող օրն է կործանարար:

***

Չգիտես ինչու, մի բան լինելիս մարդիկ ասում են, թե. «սիրտս ցավում է»: Ինչ՜ սիրտ, ինչ՜ ցավ. այդ հենց ուղեղն է, որ ոռնում է անտեսված մնալու ցավից: Չէ՞ որ նրա կատարած բոլոր գործերը վերագրվում են բոլոր մյուսներին, բացի իրենից:

***

«Մի դատիր, որ չդատվես», -ասված է:

Երբ փորձում ես դատել մեկին, կորցնում ես իրականության զգացողությունը: Ի՞նչ է, կարծում ես, թե դու ավելի լա՞վն ես: Այո, այդ պահին երբ ինքդ էլ չարացած ես, այդպես ես թվում, և այսպիսով, ակամա մեղքի մեջ ես ընկնում:

Իսկ երբ կորցրած իրականության զգացողությունը սկսում ես մեղադրել ինքդ քեզ, նորից ընկնում ես մեղքի մեջ և ժամանակավորապես արգելք ստեղծում քո հետագա մաքրագործմանը…

***

Մարդիկ սիրում են իրենց հոգին դատարկել սրտացավ մեկին: Իսկ արդյոք գիտե՞ն, որ հոգին դատարկել նշանակում է աշխարհում այլևս ոչինչ չունենալ:

«Հոգիս դատարկվեց», - թեթևացած ասում են նրանք: Իսկ աշխարհում ամենասարսափելին այդ դատարկությունն է, որից սոսկում եմ:

***

Մի օր աշխարհի ամենախոնավ բարձն արցունքադուլ հայտարարեց: Նա հոգնել էր արդեն իր տիրուհու տառապանքներից ու անդադար վշտերից:

…Եվ մի օր խեղդամահ արեց նրան…

***

Սեփական գերեզմանում պեղումներ կատարելիս հնեաբանը հայտնաբերեց հինգ հազար տարվա հնության իր դիակը: Դիակն այնքան հարազատ թվաց հնեաբանին, որ մոռանալով զգուշության բոլոր կանոնները, հակվեց և համբուրեց նրա աջը:

Եվ այս հնազանդության նշանից զգացված, նա չնկատեց, թե ինչպես մահվան փոշին խառնվեց իր երակներին ու հյուծեց հիմնովին:

…Եվ նա մահացավ…

***

Տիեզերքս ճեղքվեց հասած նռան նման, և այդ դժոխային ճեղքից հորդառատ անձրևի նման հորդացին միջտիեզերական բացիլները: Հետո ամբողջ մարմինս վերածվեց բացիլակիր մի տակառի, և ես մահացա:

Եվ այսպես, իրագործվեց ինքնաոչնչացման հավերժական երևույթի հերթական տեսլականը: Եվ տիեզերքս վերացավ աշխարհի երեսից:

***

Հանգուցյալը, որին պատահականության բերումով Պարոն Ճ էին կոչում, մի օր մեռնելիս մոռացել էր փակել աչքերը: Այո, աչքերը: Եվ հիմա խեղճը ստիպված էր բաց աչքերով նայել մեղսակից աշխարհին և իրեն սպասվող խիստ դատավճռին:

…Իսկ նրա առաջին դատավորները քաղաքի ագռավներն էին…

***

Ծեր մուրացկանը հավատ էր մուրում ամբոխից, սակայն իզուր. անհավատ ամբոխի մեջ այդպես էլ մի շռայլ մարդ չգտնվեց:

…Քաղաքում համաճարակ էր…

***

Ծեր տիրացուն սրբի քողի տակ թաքնված «Հայր-Մեր» էր կարդում: Տեսնես ումի՞ց էր թաքնվում. Աստծուց, թե՞ սեփական հոգու հայելու մեջ դաջված ճշմարտության սառած հայացքից:

***

Ծեր խեղկատակը վազում էր դարամաշ քաղաքի ամայի փողոցներով և ամբողջ կոկորդով մեկ գոռում. «Զգուշացե՛ք ձեր սեփական ստվերից. նա՛ է ձեր կյանքի կենդանի վկան և ձեր թշնամին»:

Ամայի փողոցներում կենդանի շունչ չգտնելով, նա շրջվեց դեպի իր ստվերը, և երբ փորձում էր իր վրեժը լուծել նրանից, հանկարծ վերջինս փոխեց իր գորշ ուրվագիծը, և միասին գրկախառնված՝ նրանք վայր ընկան:

Խեղճ խեղկատակը լսարան էր փնտրում իր փիլիսոփայական ուղերձի համար, երբ իր կյանքի միակ կենդանի վկան, որն ըստ իր կատարած վերջին հայտնագործության նաև իր թշնամին էր, պարուրեց նրան հավերժական գորշությամբ և տարավ կործանման:

***

Աստված ստեղծեց մարդուն իր կերպարանքով, բայց չգիտես ինչու, այսօրվա մարդը փորձում է Աստծուն կերտել ի՛ր տեսքով՝ նրան վերագրելով սեփական էությունը:

***

Իմ հեռավոր արմատները դրախտում մնացին: Տեսնես արմատներս երբևէ կարոտի զգացում կունենա՞ն, որ ինձ ետ կանչեն…

***

Այսօր մտովի ծաղիկներ տարա իմ գերեզմանին: Ես, որ ատում էի ծաղկի տեղահանությունն անգամ, այժմ մի փունջ դնում եմ դիասնունդով պարուրված հողիս:

Տես, թե ինչպես է մահը փոխում մեզ.

Դաժանությամբ լի՝ աներես հոգիս փրկության դռներ է անվերջ որոնում:

***

Մանկական կայտառ ճիչը պարապ բերաններ է փնտրում՝ դուրս ժայթելու համար: Բայց այս քաղաքում անգամ մանկական ճիչն է սառած կախվել օդում: Այստեղ քարե սիմֆոնիայի տխուր նոտաներն են միայն լսվում:

…Ցուրտ է սառած բիբի առանձնասենյակում…

***

Էլ Նինյո կոչվող ջրհեղեղից հետո իզուր էր անվտագության կանոնները ջանում դուրս գալ ջրի հորձանուտից:

Նա այլևս ոչ մեկին պետք չէր…

***

Տանկաձև ամպը շարժվեց երկնակամարով՝ փնտրելով մի անզոր պետություն: Հետո ձանձրացավ երկարատև փնտրտուքից և տեղաց մի երկրի վրա, որն իրեն ամենահզորն էր ներկայացնում:

Երկարատև անձրևից հզոր երկիրը խեղճացավ, հետո թուլացավ և, ի վերջո, վերացավ երկրի երեսից: Այս տեսնելով ամպը խիստ զարմացավ: Էլ ինչու՞ էր անզորին փնտրում, երբ ամենազորավորն անգամ իր ձեռքում դառնում էր անզոր:

***

Պատերազմը հաղթական պարեղանակ երգելով շրջում էր աշխարհով մեկ և ամենուր միամիտ զոհեր էր փնտրում: Նա իր ենթակաների՝ հրթիռների, հրանոթների ու հրասայլերի հետ մշտապես գտնվում էր բարի դրացիական հարաբերությունների մեջ, և զինվորական ծառայությունից խուսափելով՝ նրանց էր ուղարկում ռազմաճակատ:

Իսկ իր արարքն արդարացնելու համար պատերազմը շատ հաճախ ամբարտավան կեցվածք ընդունելով, հայտարարում էր. «Իմ գործը հաղթանակ տանելն է…»

***

Մարդկային դիմակները լող էին տալիս անծայրածիր տիեզերքում: Իրար հանդիպելիս նրանք անմիջապես փոխում էին սեփական դեմքի արտահայտությունը և նշանակալից ժպտալով՝ հեռանում: Ոմանք էլ բազմանշանակ հայացքներ էին փոխանակում միմյանց հետ՝ փորձելով դիմացինին հավաստիացնել, թե իրենք հենց այն են, ինչ ներկայացվում են: Եվ իհարկե, բոլորն էլ հավատում էին իրենց սեփական դիմակի արտահայտությանը: Միայն քամին էր ցավից ոռ-

նում: Չէ՞ որ նա կարողանում էր թափանցել միչև դիմակների էության խորխորատները և տեսնել նրանց իսկական դեմքը:

Քամին ոռնում էր ցավագին և ջանում էր պոկել կեղծ դիմակները մարդկանց դեմքերից: Ավաղ, կեղծիքին գերված, դիմակները վերջին ճիգերով կարողանում էին կառչած մնալ իրենց կեղծ էությանը: Եվ միայն քամին էր, որ դրսևորում էր իր իսկական էությունը, որը ժառանգել էր նախասկզբնական ժամանակներից:

***

Աշխարհում կան բազմաթիվ կետեր, որտեղից սկսվում են ճամփաբաժանները: Դրանք մեծ աշխարհ տանող ճանապարհներն են, որոնք, թեև հազվադեպ, այնուամենայնիվ կարող են դառնալ նոր ճանապարհները միացնող կետեր: Կար ժամանակ, որ այդպիսի ճանապարհներից մեկով Անկախությունն ազատորեն շրջում էր, գնում էր երկրից երկիր՝ տեսնելու, թե ինչպես են ապրում մարդիկ բռնակալության ճիրանների ներքո և ինչ միջոցառումներ են ձեռնարկում այդ բռնությունից ազատվելու համար: Նա հատկապես շատ էր սիրում փոքր ազգերին, որոնք սովորաբար առաջնորդվում են. «թեպետ մենք քիչ ենք, բայց…» սկզբունքով և, իհարկե, ընկնում են միամտության ճանկերը: Թերևս այդ եղավ պատճառը, որ մոտիկից ուսումնասիրելով այդպիսի ազգերից մեկին, նա մի օր պատռեց դրանց ղեկավարների դեմքը և օրերից մի օր վերածվելով արհամարհանքի՝ հեռացավ շուրթերի սահմաններից ու որպես գաղթական, գնաց հասավ հեռավոր Հոգու սահմանները: Սակայն պարզվեց, որ Հոգին հոգնել էր ամեն տեսակ արհամարհանքներից և հազիվ էր իր տարածքները մաքրել անբարեհաճ տարրերից: Եվ այսպես, վերամարմնավորվելով իր նախկին կերպարանքում, նա շարժվեց դեպի ծանոթ ճամփաբաժանը, որպեսզի վերջնականապես գտնի ճշմարտության ուղին: Իսկ այդ ուղին միակն էր… ճանապարհ դեպի երկինք:

***

Մի օր երազումս տեսա լուսնի խավարումը…

Մինչ ես հմայված ու զարմացած կնայեի այդ պատկերին, նկատեցի, որ լուսինն իր կարմրատակած դեմքով մի պահ նայեց զարմանքից փայլող աչքերիս, հետո զայրույթից սևացավ: Երևի հայացքիս փայլն էր այդքան զայրացրել նրան: Երբ արթնացա, դեռևս ապրումիս տպավորության տակ էի: Սթափվեցի այն ժամանակ միայն, երբ սնահավատ մարդիկ երազս մեկնաբանեցին, ասելով, թե հարազատ մարդ կկորցնես:

Խեղճ մարդիկ, չգիտես ինչու, երազները փորձում են մեկնաբանել իրենց նախնիների ուղեղի կարողությունների սահմաններում, միչդեռ եթե իրենց սեփական ուղեղն օգտագործելու լինեն, այնքան հանճարեղ մտքեր կարտահայտեն:

***

Հայելին կոտրվեց: Այդպես աղճատվեց նաև ճակատագիրդ, որն իր կոտրված բեկորների ներքո թաքցնում էր ծամածռության հասնող ջղաձգումներդ: Դու հավատացիր կոտրված հայելու զորությանը և դրանով իսկ ասպարեզ բացեցիր անհայտ ուժերի որոգայթներին:

Եվ կոտրված հայելու միջից՝ ջղաձգվող դեմքիցդ սարսափ ճառագեց: Եվ այդ սարսափը տարածվեց հասավ Մեծ Երկնավորին, որը ստեղծածդ սին հավատի մեջ քեզ հուսախաբ չանելու համար, արձակեց ճակատագրական մեծ որոշումը:

Եվ դու զոհ դարձար սեփական ձեռքով դավ նյութած մեղքիդ:

***

Անհավատի ձեռքից մատաղ վերցրեցի: Աքլոր էր մորթված. հերթական մի զոհ: Վա՜յ քեզ, խեղճ աքլոր. դու, որ անխելքության համբավ վաստակած ապրում էիր խաղաղ, հանկարծ զոհ դարձար մեզ նման մարդկանց՝ հանուն սրբազան իրենց երազի: Իսկ ո՞րն էր զոհաբերության այն մեծ խորհուրդը. որ Աստված հասնի կարոտյալներին քո՞ արյան գնով: Թե՞ այդ մարդիկ էին, որ պատրաստ էին զոհաբերության, միայն թե սեփական անձի սիրով պարուրված, դարեր շարունակ միտք էին հղացել քո սրբագործված մարմինը բաժանել որպես սին միջոց սեփական մեղքի: Մինչդեռ, զոհաբերությունն այն է իսկական, որ մարդն իր միջից մի բան զոհի:

Ասում են, միջոցներն արդարացվում են ստացված արդյունքով: Իսկ ահա տեսեք, թե արդյունքն ինչ է. մի մեծ եփված հավ, այն էլ անհավատի ձեռքով մատուցված: Այս դեպքում գուցե միջոցներն «արդա՞ր» են: Անհավատին ի՞նչ, թե անխոս մի հավ զոհ գնաց մարդուն: Հո ինքը իրեն չէ՞ր զոհաբերի: Կամ թե, հավը հո Աստծո որդին չէ՞, որ ինքը կեղծ մտահոգվողի դիմակ ընդունի:

Թե մոլորվել եք դուք անհավատի պես, սթափվեցե՛ք իսկույն, քանզի մատաղը, որ շարունակությունն է հեթանոս ծեսի, ամենևին էլ զոհաբերություն չէ: Ա՛յ փորձեք զոհել ձեզանից մի բան, թեկուզ օրինակ, մի վատ գիծ ձեր իսկ բնավորության, որից երկար ժամանակ չեք կարողացել դուք ձերբազատվել: Եվ այնժամ արդեն դուք կլինեք իսկական ճամփին քրիստոնեացման:

***

...Եվ սկզբում Բանն էր,
Խոսքը, Միտքը արարչագործության...

Երբ հայր Աստված բնությունը ստեղծելու երկունքի մեջ էր, հանկարծ միտք հղացավ. նախքան երկինքն ու երկիրը ստեղծելը, ստեղծել սեփական հոգու շունչը, որը հետագայում պետք է կենդանացներ ողջ բնությունը: Նա իր հոգու խորքում առանձնացրեց հարյուր հազար բիլիոն քառակուսի մետր տարածություն և խնամքով դատարկեց միջի պարունակությունը, հետո մաքուր օդ ներշնչեց և մի քանի րոպե շունչը պահելուց հետո խորն արտաշնչեց: Սակայն այդ շունչը մի տեսակ հոգոց հանելու պես ստացվեց:

«Չէ, չարժե դեռևս չստեղծված բանից դժգոհել», - մտածեց նա և կրկին անգամ փորձեց վերարտադրել սեփական շունչը: Չէ, նորից սրտոմը չէր: Այս անգամ տարօրինակ սուլոց դուրս եկավ, ասես ոռնացող քամի ստեղծելիս լիներ:

Երրորդ փորձն արդեն դուր եկավ Աստծուն: Արտահանված շունչը նա արագորեն մշակման ենթարկեց, հետո ակամա բաժանեց մի քանի տեսակների, և սեփական հայտնագործությունից ոգեշնչված, նախապատրաստվեց ներարկման փորձարկումներին:

Որոշ ժամանակ անց սկսեց եզրագծել երկնքի ու երկրի սահմանները, և այսպես ստեղծեց երկինքն ու երկիրը: Հետո ստեղծեց բնությունը՝ բուսականությունն ու կենդանիներին, և հերթով բոլորի մեջ փչեց իրենց համար նախատեսված շնչի բաժինը: Վերջում ստեղծեց մարդուն, և որպեսզի մարդը ձանձրույթից չմեռնի, նրա կողից կտրելով, հայր Աստված ստեղծեց կնոջը:

Արարչագործության մեծ խորհուրդն է թաքնված այդ սկզբունքի ներքո. որպեսզի ստեղծես որևէ բան, պետք է քեզանից գեթ մի մասնիկ ներդնես դրա կերտմանը. այլապես ուրիշի ստեղծածը վայելելը շատ հեռու է Աստվածային սկզբունքից:

***

...Եվ Աստված փչեց իր շունչը կենդանիներին,
Եվ կենդանություն տվեց նրանց,
Եվ նապաստակը անմասն չմնաց այդ շնչից:

Նրանք արգելափակել էին աշխարհի ամենապտղաբեր կենդանուն, նապաստակին, և թողնելով միայնակ իր վանդակում, առանց որևէ գերդաստան ունենալու ակնկալության հույսի, փորձում էին

փոխել աստվածաստեղծ կյանքի ընթացքը: Նրանք իրենք էլ կամավոր հրաժարյալներ էին, որ ակամա դարձել էին Աստծո «ապրեք և բազմացեք» կարգախոսի հակառակորդներ: Եվ ահա, Նրանցով դրվում էր մարդկության բազմացման ավարտի սկիզբը:

Ամեն առավոտ, երբ պտղաբերության խորհրդանիշը ողջունում էր Նրանց իր ներքին ժպիտով, Նրանք փառավորվում էին: Սեփական փառավորմանը հաջորդում էր Աստծո փառավորումը: Որքա՜ն շնորհակալ էին նրանք Աստծուց, որ իր լույսը աշխարհին սփռելուց հետո, նա իր շունչն էր փչել նապաստակի կերպարանք ունեցող այդ կենդանու մեջ: Իսկ աստվածային այդ շունչն այնքան հարազատ էր դարձել այդ կենդանուն, որ այն վայելելու հաճույքից նա ակամա վերածվել էր պտղաբերության խորհրդանիշի: Ճիշտ այնպես, ինչպես Նրանք էին հետագայում դառնալու դրա ավարտի սկզբնավորողները:

Թե որքանով է այս պատմությունը ճիշտ, կգրեն Աստծո առաքյալները, սակայն այս նոր գրագիրներն արդեն պետք է շտապեն, քանի դեռ չի վերջացել այն ամենը, ինչը երբևէ սկիզբ է ունեցել:

ԾԱՌԱՊԱՏՈՒՄ

Ծառը ոռնում էր ցավից…

Կարծեցիր քամին է, պատսպարվեցիր ծառի ճյուղերում: Ծառը վշտացավ մարդկային տկարամտությանդ համար և պարուրվեց մահվան սառը շնչով: Մահը միացած ծառի ոռնոցին՝ ճանապարհին հանդիպած ամեն ինչ խառնեց, տարավ դեպի ոչնչության անդունդը:

Ապա ամենուր ամայացավ… և միայն ոռնացող ծառն էր, որ կանգնել էր երկրի կենտրոնում և չէր զգում նույնիսկ սեփական մերկությունը:

…Ասում են, թե ծառերը մեռնում են կանգնած…

***

Ծառերն էլ մարդկանց նման սիրում են նեղանալ ու վիրավորվել իրենց ծառակիցներից. միայն մեկ տարբերությամբ, որ նեղացած մարդիկ ի զորու են վերադարձի քայլ կատարելու, մինչդեռ միմյանցից հեռացող ծառերը շատ պրկվելիս, վնասում են իրենց նյարդային համակարգն ամուր շաղկապող պիրկ ողնաշարը:

Իսկ անողնաշար ծառի ապագան թղթի վերածվելն է…

***

Ադամական մեղքի պատճառով քարացել էին ոչ միայն մարդկանց սրտերը, այլև ծառերը, ժայռերը և նրանց հետ ողջ բնությունը: Նրանք սպասում էին մեծ ազատագրման օրվան, այն օրվան, երբ մարդիկ ազատվելով իրենց գործած մեղքից, կփրկեն բնությունը կործանումից: Սակայն փոխարենը մարդիկ սկսեցին պայթուցիկ նյութեր հնարել և մրցել բնության տարերքների հետ, ինչը զայրացրեց հատկապես Կայծակին: Նա շանթահարեց մարդկանց զավակներից շատերին. մարդիկ էլ շանթարգելներ կառուցեցին: Զայրացել էր նաև Հողաշերտը, որը միավորվելով Ջրի ուժերին, ժամանակ առ ժամանակ անբերրիությամբ էր պատժում մարդկանց: Նա իր բոլոր շերտերին հողաշրջման կոչ էր անում, որպեսզի համատեղ ուժերով կարողանային մի մեծ երկրաշարժ առաջացնել և կործանել երկիրը: Իհարկե, նրա մեղսակից Ջրհեղեղը նույնպես իր մասնակցությունը կբերեր այդ մեծ գործին, թեև նրա աշխարհակործան ուժերի ժամանակն անցել էր:

Քամին էլ էր զայրացած մարդկանց դեմ: Մարդիկ նրա մարմինը նկարում էին գորշ գույներով, մինչդեռ նա ինքն իրեն համարում էր ամենաստեղծ Աստծո շունչը, որը ժամանակ առ ժամանակ ծածանվում էր երկրի մակերևույթին և զովություն պատճառում մարդկանց: Ինչ արած, հեղաշրջում է, թող լինի հեղաշրջում: Ինքը ևս կմասնակցի բնության տարերքների մեծ շարժմանը և իր ահեղ փոթորիկները կուղարկի մարդկանց դեմ, և վերջապես ծառերի հոգիները կազատագրվեն մարդկային մեղքից, իսկ իր՝ Քամու լուսապսակը կներկվի ծիածանի գույներով ու կփայլի աստվածային տիրույթներում:

Այս մտորումների մեջ, Քամին բարձրացրեց իր զորավոր փեշերը և սուրաց մարդկանց վրա: Նրան միացավ Կայծակն իր ահարկու կրակե շանթերով: Մարդկանց կողմից ստեղծված հոսանքի լարերն օգնեցին կործանիչ գործողությունների արագացմանը: Այնուհետև մարտին միացավ Երկիրն իր բոլոր հողաշերտերով: Եվ կործանիչ Երկրաշարժը իր վերջին հարվածով ազատագրեց Երկիրը մարդկանց ծանր մեղքերից: Կեցցե՛ն բնության մեծ ազատարարները…

Այդպես է կյանքը. մեկի կործանումը նշանավորվում է մյուսի ազատմամբ:

***

Քսան դար հետո ցավում են արդեն ծառի հավերժական ականջները…

***

Ձմեռ է, ցուրտ ու մութ ձմեռ…
Իսկ տերևաթափ ծառի ճյուղերը
Հեռվից սևին են տալիս,
Ասես խռնված ամբոխ լինեն:
Այս քաղաքի ագռավները ի՞նչ միամիտ են…

***

Ծառ ջան, դու՛ էլ ծերացար ցավոք,
Կամ ո՞վ գիտե, գուցե դու ծեր ես ծնվել.
Ինչպես իմ հոգին մանուկ չի եղել
Նախասկզբնական վաղ ժամանակից:
Ծառ ջան, գիտեմ, դու ի՛մն ես եղել,
Թեպետ ուրիշներն են քեզ միշտ խնամել:
Ուրիշներն են քեզ ջրել, աճեցրել,
Բայց իմ հոգու սերը չի տվել ոչ ոք.
Ես քեզ սիրում եմ հայրական սիրով,
Ինչպես Աստված է միշտ սիրել մարդկանց,
Ինչպես երկինքն է սիրել երկրին,
Բայց մոտենալով՝ միշտ էլ ակամա հեռու գնացել:

***

Գիշերվա վայրի շունչն էր տարածվել
Դժոխային լռության մեջ…
Սևագործ ամբոխը թաղում էր արևին,
Իսկ մեռելահոտը խառնվել էր անձրևին
Ու տեղում էր անդադար՝
Թափվելով երկրագնդի վրա…
Իսկ անձրևից հետո արդեն
Ողջ բնությունն էր պարուրված այդ շնչով.
Հավերժական գիշերն էր պատել աշխարհին:

***

Թեև կապույտ էր ծովը երկնային,
Կապույտ էր տիեզերքը ողջ,
Սակայն այդ համատարած կապույտի մեջ
Սևավորված հոգիս տառապանքի բծեր էր թողնում ամենուր…
Ես սարսափում եմ այդ բծերի դաշինքից:

***

Տառապանքից ծնվող երգերս լռել էին.
Էլ չէի տառապում:
Ո՛վ դու տառապանք ծնող
Իմաստուն ոգի,
Փառք եմ տալիս քեզ,
Որ հոգեհարազատ տառապանքս խոր,
Գտար ու կրկին սեպեցիր սրտիս.
Անառակ որդու առակը հիշիր,
Ու պահապան դարձիր իմ վշտին:

***

Մարդիկ միմյանցից
Արյան վիշտ են քամում
Ու անհագ հողի պես կլանում մինչև վերջ...
Իսկ վիշտը կդիմանա՞ դրան:
- Չգիտեմ...

***

Չարի անվան տակ թաքնվեցիր՝
Քողարկելու համար բարի էությունդ:
Հոգ չէ, թե մարդիկ ինչ կասեն.
Կարևորն այն է այստեղ,
Որ թյուրիմացության մեջ գցեցիր
Մեծ Չարքին,
Որից այդքան սարսափում են մարդիկ:
...Եվ նա քեզ աչքաթող արեց...

***

Ուրախությունն անանձնական բաշխեք աղքատներին,
Թող որ սովյալնե՛րը մտնեն երկինք,
Չէ՞ որ կուշտ ու հարուստ մարդիկ
Շատ ամուր են կառչած հողին:
- Ո՛վ, մոլորված մարդ, կանգ առ ճանապարհին,
Տես թե քանիսն են ինձ պես խեղդվում՝
Հայացքը հառած կապույտ երկնքին:
Շատե՛րը քեզ դասեր կտան երկնային կյանքից,
Մինչդեռ ոտքիդ շղթաները կսթափեցնեն քեզ:

***

Մահը տրվեց ծովի ալիքներին՝
Կենդանի մնաց:
Հետո նա տրվեց հողին պապակած,
Եվ ա՛յ քեզ հրաշք.
Հողին տրվելով վերածնվեց ասես,
Որ մի նոր մահով ապրի այս կյանքում,
Որ նոր մահեր իրենից սերի
Եվ պատի աշխարհը ցմահ մահերով:

***

Մեղքից փախչելով ակամա ընկար այն մեղքերի մեջ,
Որ շատերը «Ադամական» մեղք են անվանում.
Հետո սկսեցիր մեղադրել չգիտես, թե ում,
Եվ կրկնակի մեղքի մեջ ընկար.
Այն դեմ է արդեն մեկ այլ օրենքի, որտեղ գրված է.
«Մի դատիր, որ չդատվես»:

***

Բաց գերեզմանս ինձ ժպտաց մի պահ,
Եվ ես հեգնանք տեսա նրա աչքերում.
Ես, որ մահվան կենդանի մնացած
Բարեկամն էի միակ,
Մի պահ վախեցա:
Ես մա՛հը տեսա նրա աչքերում,
Մահը, որ իմ իմացած հին մահերից չէր,
Այլ դատարկություն մի անսահման,
Որ ինձ կործանում էր անվերջ խոստանում:
Եվ ես հլու-հնազանդ իմ ճակատագրին,
Ընդառաջ գնացի՝ մտքում կրկնելով.
«Տե՛ս, թե ինչպես են բոլորը փոխվում,
Եվ նրանք այլևս քո իմացածը չեն.
Բոլորն օտար են, բոլորը օտար»:

***

Գերեզմանիս կոկորդը պատռվեց ինձ կանչելով,
Իսկ ես չգիտես ինչու, կառչած եմ երկրից:
Ես, որ անպտուղ թզենու նման
Զրկված եմ կենարար ջրի վայելքից,

Ամուր կանգնած եմ այս պապակ հողին:
Դաժան է կյանքը, զրկանքներով լի…
Իսկ ես զրկված եմ գերեզմանիս հետ հաղորդակցվելուց:

***

Թողեք, որ ցավով ես գրկեմ իմ բախտը.
Նա մեռավ ինձ հետ:
Ո՜վ դուք երկնային վեհ արարածներ,
Ազուցեք ուղեղիս թելերը Աստծուն,
Որ մոտ լինեմ նրան.
Այլապես ցավում են
Դատարկության մեջ լող տվող
Ուղեղիս ծալքերը:

***

Երբ փոշին փռշտաց
Սեփական փոշու փշուրներից,
Փոշե ամպ իջավ
փոշոտման կարոտ
ծաղիկների աչքերին,
Եվ փոշե պսակներ դրվեցին
Նրանց անմեղ գլխիկներին:
- Որտեղի՞ց եկավ այս փոշեծին սերմը.
Արդյոք երկնքի՞ց:

***

Մի անգամ,
Երբ երկրի ձգողականությունն
Ամբողջովին պարուրել էր հոգիս,
Ես մահացա:
Երբ մահացա,
Ինձ թաղեցին աշխարհի ամենախորը փոսում,
Որպեսզի մոտ լինեմ երկրի ընդերքին
Եվ հաստատեմ մարդկանց կողմից սահմանված
Ձգողականության օրենքը:
Սկզբում ոսկորներիս երկաթը
Հաստատուն կերպով պահում էր
Մարմնիս հավասարակշռությունը,
Եվ մագնիսական դաշտի առկայության շնորհիվ,

Ես չէի փտում:
Հետո խեղճ երկաթանյութը հազիվ
Հասցնում էր ոսկորներիս ամրությանը հետևել.
(Հո այդպես անհետ չէ՞ի կորչելու,
Գեթ մի դատարկ գանգ պիտի մնա՞ր ինձանից, թե՞ ոչ):
Այդ ընթացքում մարմինս կամաց-կամաց
Անջատվում էր ոսկորներից
Եվ շարժվում էր դեպի երկրի ընդերքը,
Որն իր ջերմությամբ գայթակղող մի հայտնի կրակե լիճ էր:
Իսկ հոգիս, որը վաղուց էր անջատվել մարմնիցս,
Գրանցում էր համակարգչային ճշգրտության հասնող արդյունքները.
«Մարմինը, որը երբևէ պատկանել է ձեր խոնարհ ծառա՝ Հոգուս,
Այժմ ձուլվում է կրակե լավաներին և մի նոր հրաբուխ է գուժում:
Իսկ ոսկորները, իրենց մեջ եղած երկաթի շնորհիվ,
Դեռ կապրեն մի քանի դար, գանգոսկրը՝ նույնպես:
Սակայն այս ի՞նչ է.
Շուրջս ամենուր ատամների կրճտոց եմ լսում…»

***

Ասում են. «Ընդունելի լինի…»
Ու զոհաբերում են
Աստծո ստեղծած շնչավոր էակին:
Ասում եմ. «Ա՛յ, մարդ, նախ ինքդ փորձիր
Դու մի բան ստեղծել,
Որ թեկուզ անլեզու ու անշունչ լինի,
Եվ հետո նայիր ուրիշի գործին»:
Ասում են. «Ո՞նց չէ, ախր Աստված է
Ստեղծել կենդանուն,
Որ մենք էլ զոհենք երբ որ կամենանք»:
Ասում եմ. «Թե այդքան քաջ եք դուք եղել,
Լավ է զոհաբերեք ձեր մեջ հաստատված
Այն պղծությունը, որ մեղք է ծնում.
Միևնույն է, ձեր հոժար կամքով
Երբեք չեք ձգտի ազատվել չարից,
Իսկ զոհաբերության տոչորով այրված
Գոնե մասնակից կդառնաք մի բարի գործի:
Թե զոհեր տալու պահանջ ունեք դուք,
Ա՛յ, զոհաբերեք նախանձը ձեր չար,
Կամ էլ կեղծիքը, խանդն ու սարսափը,

Եվ այն ժամանակ ես կհասկանամ,
Որ թեպետ ծանր էր արժեքը դրա,
Բայց դուք զոհեցիք ձեր միջից ելնող,
Ձեր մասը կազմող մի վատ հատկություն,
Այլ ոչ թե ինչ-որ անմեղ կենդանի,
Այն էլ, հենց ի՛ր, Աստծո ստեղծած»:

***

Դու միշտ լուռ ես, Տեր.
Ես ուզում եմ գրկել լռությունդ հավերժական,
Որ ընդմիշտ համրանամ:

***

Դու փարատեցիր տխրությունս Տեր
Քո իսկ լռությամբ.
Հիմա հասկացա լռությանդ խորհուրդը:
Ո՛վ Տեր իմ Աստված,
Թող որ ես ձուլվեմ լռությանդ մեծ.
Առաջնորդիր ինձ
Քո խորախորհուրդ մենաստաններում
Որպես մենակյաց...

***

Տեր իմ, դու ստեղծեցիր հավերժական համրությունը
Ի տես համայն աշխարհի,
Որ մարդկությունն ի վերջո հասկանա
Կուսական աշխարհիդ ողջ գեղեցկությունը:
Դու ստեղծեցիր բնությունն իր հավերժական լռության մեջ,
Քանզի իմաստուն էիր...
Բայց մարդիկ ձանձրացան քո էության լուռ բնույթից
Եվ դարձան դատարկախոսներ՝
Աշխարհը լցնելով վայրենաբարբառ վանկարկումներով:

***

Դու միշտ լուռ ես, Տեր,
Քանզի մենակ ես...
Երբ ստեղծեցիր աշխարհը,
Կարծեցիր, թէ կփարատվի
Քո մենությունը,

Բայց արի ու տես,
Որ դարձյալ մենակ ես:
Եվ մենության խորհուրդը
Իմաստնացրեց քեզ, Տեր…
Դու, որ որդուդ մարմնավորմամբ
Այնքան ջահել էիր,
Հանկարծ ծերացար:
Աշխարհը լքեց քեզ,
Եվ դու փակվեցիր
Սուրբ առանձնության
Քո տիրույթներում
Որպես մենակյաց:
Օրհնեալ է մենությունդ, Տեր,
Եվ փառավորված…

***

Տեր իմ,
Քո ամպերն ինձ այնքան էին դյութել,
Որ մոռացել էի ծննդյանդ օրը:
Ների՜ր ինձ, քանզի
Ամպերիդ մեջ փնտրում էի քո նոր ծնունդը,
Մինչդեռ իմ մեջ էր այն
Շուրջ երկու հազար տարի:

***

Տեր իմ,
Երբ մի օր թափառում էի քո տիրույթներում,
Հանդիպեցի որդուդ, քո մինուճարին,
Որին մատաղ արեցիր մեր փրկության համար:
Հիմա նա ամենուր է…
Սահելով հավերժական ամպերիդ վրայով՝
Նա ձգվում է երկիր, դեպի մարդկանց աշխարհը,
Որտեղ վաղուց են ուրացել նրան,
Նաև քո մարմինն ու արյունը…

***

Բարկությունդ անձրևի վերածած
Տեղացիր մեզ վրա Տեր,
Եվ այժմ տեղատարափ զայրույթիդ ներքո

Ես սարսափում եմ սեփական անզորությունից:
Ես ինձ երբևէ զորեղ չեմ կոչել,
Բայց հիմա, ա՜խ որքան կուզեի
Գեթ չնչին չափով տարափդ մեղմել:
Տարափի՜ր, ով Տեր, կլանի՜ր դու ինձ,
Թո՜ղ շանթարգել դառնամ իմ մարմնով.
Միայն թե հավետ պահպանիր դու այն,
Ինչը աստվածային մտքիդ ծնունդն է եղել…
Պահպանիր մարդկանց:

***

Հայր Մեր,
Դու խոստացար մեզ տալ
Հոգու ազատություն,
Բայց շղթայեցիր մարմնով
Ու գամեցիր երկրին:
Դեռ ավելին,
Ասացիր՝ եղեք կին և ամուսին,
Ունեցեք զավակներ
Ու կապվեք ձեր հողին
Մինչև կյանքներիդ ավարտը:
Եվ այսպես,
Մահով ավելի գամեցիր այդ հողին:

***

Քո տան ագռավները ինձ կերան, Տեր,
Եվ մարմինս բզկտեցին չարանենգի պես…

***

Իմ կորստով փրկվեց մարդկությունը Տեր.
Մինչ դու նայում էիր անտարբեր հայացքով,
Ես մահ էի խնդրում…
Եվ դու գթացիր, քանզի ամենակարող էիր:
Ո՜վ մահ տենչացող ճղճիմ էակներ,
Ողբացեք մահս,
Ոգեկոչեցեք ձեր նախնիներին:
Այս տիեզերքում
Միևնույն է, ես կա՜մ,
Թեկուզ մահովս չսրբագործվեմ

Որպես նահատակ:
Ո՛վ Տեր իմ Հիսուս,
Պատրաստ եմ դառնալ պատգամիդ գերին.
Թող որ իմ մահով փրկվի մարդկությունդ վերածին…

***

Բարի մարդկանցով շրջապատիր ինձ, Տեր,
Ինչպես առաջ էր,
Երբ ես դեռ շա՛տ բան ունեի նրանց տալու:
Երբ ոչինչ չունես, բարի մարդիկ էլ չկան աշխարհում…

***

Քեզ հիշում ենք Տեր
Այն ժամանակ միայն,
Երբ մեր ուժերից վեր
Մի բան ենք անում:
Երբ մեր ուժերին է՛լ չենք վստահում,
Քեզ ենք մենք դիմում:
Մինչդեռ մոռանում ենք,
Որ ամե՛ն ինչ է քեզնով կատարվում,
Որ անկախ չափից մեր գործողության,
Դո՛ւ ես այն շարժիչ ուժը զորավոր,
Որ տիեզերքներ է կերտում անսահման:

***

Մարդկանցից զայրացած
Դու այնքան հեռացար,
Տեր,
Որ այլևս ոչ ոք
Քեզ չգտնի:
Հիմա ես քո ճամփան եմ բռնում…

***

Դու Աստվա՛ծն ես իմ,
Եվ ես իմ հոգում փայփայում եմ քեզ.
Էլ ի՞նչ հոգի, Տեր,
Երբ ես և դու մեկ ենք,
Միևնույն հոգին…
Ես էլ չկամ… չկամ…

Ծնունդովս արդեն ես կնքեցի մահկանացուս
Եվ բանտեցի ինձ ինչ–որ մարմնի մեջ,
Որ մարդ է կոչվում:
Թե ինչու այդպես պատահեց հանկարծ,
Հարցրեք իմ Աստծուն,
Որը զավակին պատժելու պահին
Որոշեց մարմին հագցնել նրան:
Հայր իմ երկնային,
Ների՛ր մեղքերս և տար ինձ քեզ հետ…
Ես սերտաճած եմ այս օտար մարմնին,
Որից դուրս գալը ինձ մահ կթվա,
Մինչդեռ տիեզերական քո եզերքներում
Դա միացումն է համայն ոչինչի,
Որ ամեն ինչն է,
Բայց և ոչինչը,
Այն Մեծ Ոչինչը տիեզերական…

***

Փնտրում էի քեզ երկնքում, Տեր,
Բայց իմ մեջ գտա…
Ծվարել էիր հոգուս ամենախորունկ անկյունում
Եվ ժպտում էիր չարաճճի մանկան նման:
Եվ հանկարծ մի պահ ես հասկացա,
Որ ես և դու նույնն ենք,
Մենք նույնացած ենք…
Ես, որ անհամբեր սպասում էի
Միաձուլվել քեզ մահվանից հետո,
Հանկարծ հասկացա, որ ձուլված ենք եղել
Իմ ծնունդից ի վեր.
Եվ ես խենթացա
Քեզ հետ նույնական լինելու մտքից…
Ուրեմն ի՞նչ.
Խենթի հետ խենթ ես
Ու խելամտի հետ խելամի՞տ.
…Դու խենթ Աստվա՛ծն ես իմ երազանքի,
Դու էությո՛ւնն ես համայն մարդկության,
Եվ դու Ոչի՛նչն ես, այն Մե՛ծ Ոչինչը հավիտենության…

ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ՀՈՎԱՆԱՎՈՐ Է ՓՆՏՐՈՒՄ

Երկրագունդը նստել էր պատշգամբում և մտազբաղ աստղերին էր նայում: Նա մտածում էր վերջերս տված իր մի հայտարարության մասին. «Երկրագունդը փնտրում է հովանավոր»: Ինչ՞ կա որ: Հիմա շատերն են այդպես անում: Հապա ինչպես բուժի օգոնի շերտի քայքայումը, բնապահպանական ավազանի աղտոտումը, որոնց համար շա՛տ մեծ գումարներ են հարկավոր: Բացի այդ, կա ծերություն, թոշակի անցնելու վտանգ. էլ չասած, թե մարդիկ իրեն ինչ մեծ վնասներ են հասցնում իրենց գիտական փորձարկումների պատճառով: Չգիտես թե ինչ ռումբերով նրանք քաղաքներ են պայթեցնում և հետո հայտարարում, թե երկրաշարժ էր, թե երկրի ընդերքում չգիտես ինչեր են խառնվել, ու երկիրը զայրացել է... Եվ ինչու՞ չէ: Մեկ-մեկ էլ զայրույթից Երկրագունդը քիչ էր մնում ողջ ընդերքը խառներ իրար:

Ինչ՞ անի, չգիտի: Երևի մի արտահերթ նստաշրջան հրավիրի ողջ տիեզերքով մեկ և հանրաքվեի միջոցով պարզի, թե արժե՞ արդյոք մի նոր ջրհեղեղ կազմակերպել: Թե չէ բոլորը միայն խոսում են, իսկ գործ անող չկա: Շատ տարիներ են անցել այն օրերից, երբ ամենուր գրում էին. «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»: Իհարկե, երբ գեղեցիկ ես, երիտասարդ, քեզ շողոքորթում են, սիրաշահում, իսկ հիմա երբ ծերացել ես, երեսիդ նայող էլ չկա:

Մի հովանավորն ինչ՞ է, այդ էլ է չորացել...

***

Թերթում կարդալով սեփական անձի ծերանալու մասին մարդկանց կողմից հնարված հերհյուրալից տեսությունները, երկրագունդը զայրույթից պայթեց: Եվ այսպես, քանի որ երկրագունդը երկրի երեսից ի սպառ վերացավ, Աստված ստեղծեց մի նոր երկիր ու երկինք, որն ավելի հավասարակշռված գտնվեց իր զգացմունքների մեջ: Նրա շուրջը մի այնպիսի լուսապսակ ծավալվեց, որ այլևս ոչ մի այսպես կոչված խոռոչ չէր կարող փչացնել նորաստեղծ երկիրը:

Այսպիսով էլ, երկրագնդի դիմագիծը հավետ փոխվեց:

***

Երկար տարիներ հովանավոր փնտրելուց հետո, Երկրագունդը հանկարծ որոշեց ինքնասպան լինել: Նրա միակ հարազատները՝ երկնային լուսատուները, չգիտեին այդ մասին: Արեգակը միշտ պայծառ մտքեր էր ճառագում աշխարհին, և այնքան էր նրա բարի ուղեղը հեղեղված լույսով, որ նրա մտքով անգամ չէր անցնում նման ան-

հեթեթ արարքի մեջ կասկածել որևէ մեկին: Դե, իսկ աստղերն արդեն այնքան երազկոտ էին, որ ապագայում որևէ հայտնի համաստեղություն կազմելուց բացի, ոչինչի մասին չէին մտածում: Միայն Լուսինն էր, որ հեռավոր կասկածներ ուներ երկրագնդի անկայուն բնավորության մասին: Չէ՞ որ նա միակ երկնային էակն էր, որ ամբողջովին կլանում էր Երկրագնդի բացասական լիցքերը, փոխարենը չկարողանալով հաղորդել նրան լավատեսական, պայծառ մտքեր:

Նրա թվացյալ սառնությունը միշտ էլ երկնային լուսատուներին արգելակում էր կիսելու հոգու գաղտնիքները: Եվ նա բոլորին թվում էր մի սառն ու անտարբեր անձնավորություն, թեև իրականում նա ամբողջ հոգով կիսում էր մյուսներին ժամանակ առ ժամանակ պատահող դժբախտությունները:

Նա ուներ բացասական էներգիա կլանելու մի գերբնական հատկություն, սակայն դեռևս չէր հայտնաբերել այդ էներգիան դրականի փոխելու միջոցները: Նրան թվում էր, թե իր բարությամբ նա կհաղթահարի չարը, որի շնորհիվ էլ իրեն կհաջողվի լիցքերի վերափոխություն կատարել: Սակայն հետագայում նա հասկացավ, որ ինքը միայնակ անկարող է որևէ բան փոխել: Եվ այսպես, նա շարունակեց բացասական լիցքեր հավաքել բոլոր երկնային լուսատուներից, մինչև որ ամբողջովին ճկռեց անասելի ծանր մի բեռի տակ:

Հետո, երբ մյուս լուսատուները տեսան Լուսնին բացասական լիցքերով պարուրված, նրան համարեցին ոչ միայն սառն անձնավորություն, այլև դասեցին չար լիցքեր ունեցողների շարքը: Հետագայում արդեն նրա չարության համբավն այնքան տարածվեց, որ բոլոր պատերազմների, երկնային ու երկրային աղետների չարագույժ լուրը փորձեցին գուշակել նրա մեջ նայելիս: «Երբ տեսնեք, որ լուսինը կարմիր է, նշանակում է պատերազմ է լինելու», - ասում էին նրանք առանց որևէ կասկած իսկ ունենալու, որ այդ Լուսնի սրտի կսկիծն էր, որ վշտի երակները պատռելով, գունավորել էր նրա ողջ մակերեսը: Չէ՞ որ նա միակն էր ամբողջ երկնակամարում, որ կարողանում էր իր առաջին հեռավոր կասկածն արտահայտել իրերի ու երևույթների մասին:

Նույնը պատահեց և Երկրագնդի հարցում: Լուսինը կասկածեց Երկրագնդին հեղհեղուկ բնավորության մեջ: Հետագայում, երբ ավելի մանրամասնորեն ուսումնասիրեց նրան, տեսավ, որ դա կամավոր ինքնասպանություն չէր: Խեղճը նյութական ծանր դրության մեջ հովանավոր էր փնտրել, և ոչ ոք չէր օգնել նրան: Դեռ ավելին, ծաղրելով՝ նրա բնակիչները սկսել էին փորփրել խեղճի ընդերքը, թե տեսնենք ինչ կա ներսում, գուցե ոսկինե՞ր ունի պահված: Իսկ նա, խեղճը,

չէր էլ հակառակվել: Դե ախր ի՞նչ աներ: Ճիշտ է, սկզբում փորձել էր մեկ-երկու փոքրիկ երկրաշարժերով վախեցնել նրանց, հետո ընդերքից փրփրակալած կրակե լավաներ էր բաց թողել, բայց ինչ՞ օգուտ. զանազան տեսություններ հնարելով, այդ մեծամիտ բնակիչները սկսել էին կանխագուշակել անգամ իր մտքերը: Գուշակել էին, թե որ օրը որ ժամին որտեղ պետք է երկիրը շարժվեր կամ կրակ բաց թողներ: Հե՜յ գիտություն, գիտություն: Տե՜ս թե ինչե՜ր են անում: Նստել են խեղճ ծերուկի մակերեսն են չափում, հետո հորատումներ են անում և կամաց-կամաց բոլոր ներքին օրգանները հանում են երկրի երես: Կարծես, թե էլ ուրիշ անելիք չունեն:

Եվ ահա մեր թույլ ու անպաշտպան Երկրագունդն էլ հազիվ հուսալքված հայացքներ էր գցում Լուսնի վրա և օգնություն խնդրում նրանից: Ինչ՞ անի: Չէ, լավ կլիներ, որ հզոր Արեգակին դիմեր: Նա գոնե կրակ ունի: Ասա, ա՛յ Երկրագունդ, մի կրակ վերևում կա, մյուսն էլ քո ամենաընդերքում. ինչ՞ կլինի, որ իրար միացնեք, տեսնեք ինչ կլինի: Չէ՞ որ երկուսիդ կրակն էլ նույն նյութից է բաղկացած: Բա նույն մասսա ու խտություն ունեցող նույնատիպ նյութերը իրարից հեռու կապրե՞ն երկու տարբեր ժողովուրդների նման: Լավ է իրար միանաք, իսկ թե հետո ինչ կլինի, Աստված մեծ է: Ոչինչ, եթե երկու կրակները միանալով, վերջում ամբողջ մարմնիդ մակերեսը մոխրացնեն. փոխարենը, կարևորը հոգին է, ա՛յ Երկրագունդ, միթե՞ այսքան ժամանակ չհասկացար:

***

Պայթյունից ծնված տիեզերքը մի օր պայթյունին էլ զոհ գնաց: Իսկ դա պատահեց այն ժամանակ, երբ աշխարհակործան հոգիների չարության խտացման հետևանքով բարձրացավ տիեզերքի ջերմությունը: Ջերմի մեջ զառանցելով, տիեզերքն Աստծուց օգնություն էր խնդրում: Սակայն Աստված, նոր տիեզերք, երկինք ու երկիր ստեղծելու երկունքի մեջ՝ չէր լսում այն:

Այդպես, չար տիեզերքը պայթեց զայրույթից, մինչդեռ Աստված նորից ծնում էր մի նոր տիեզերք, որն ի սկզբանե նախատեսված էր բարի լինելու…

***

Արդեն երեք ժամ էր, ինչ Կինը կանգնած էր անկյունում՝ դեմքը դատարկ պատին հառած: Նա մերթ թեքվում էր, մերթ դատարկ պատն էր համբուրում, և հեռվից բացարձակ խենթի տպավորություն էր թողնում: Պատը, որի մոտ կանգնած էր կինը, գտնվում էր մի մար-

դաշատ փողոցում, որտեղ անցորդները հազիվ էին ճեղքում հանդիպակաց հոսանքի առաջացրած խոչընդոտները: Շատերը նույնիսկ չէին էլ նկատում ինքն իրեն անկյունում պատժած կնոջը: Միայն մի քանի անցորդներ տարակուսած հապաղում էին մի պահ, հետո հեռանում. գուցե օգնության կարի՞ք էր զգացվում:

Հոգնելով երկար նայելուց, անցորդներից մեկը մոտեցավ կնոջը: Որքան մոտենում էր, այնքան ավելի ակնհայտ էր թվում կնոջ խենթ լինելը: Ասում են, խենթերին երկար նայել չի կարելի. կվիրավորվեն: Գուցե այդ էր պատճառը, որ մոտեցողը ձևացրեց, թե պատահական անցորդ է, որը պարզապես մոտենում է ինչ-որ բանի, ասենք, պատին ամրացված փոստարկղին: Երբ անցորդը մոտեցավ կնոջը, սարսափից քարացավ:

Նա խենթ չէր, և ոչ էլ կորցրել էր մտքի զգոնությունը: Նա աղոթում էր…

ԱՂՈԹՔԸ

- Հիմա մեզ հետ ի՞նչ կլինի:

- Կփրկվենք, եթե աղոթենք:

Եվ փոքրիկ աղջիկը սկսեց աղոթել.

«Հայր Մեր, որ երկնքում ես,
Թող սուրբ լինի անունը քո»,
Ապա մի պահ ընդհատեց
Եվ մտորումների մեջ ընկավ:

- Դու գիտե՞ս, ես շատ եմ սիրում Աստծուն, - իրենից անկախ արտաբերեց նա, հետո նորից մտքերի մեջ ընկավ. «Ափսոս, որ ամենուր մութ է. ես այնքան եմ ուզում տեսնել նրա պատկերը»:

- Նա քո մեջ է, - լսվեց խուլ, հեռավոր մի ձայն:

Փոքրիկ աղջիկը դարձյալ տխրեց, որ լույս չկա, որովհետև նա ժամանակին չէր սովորել առանց լույսի տեսնելու գաղտնիքը: Նա փակեց աչքերը և շարունակեց աղոթքը. «Հայր Մեր, այնպես արա, որ ամենուր լույս լինի, որ բոլորն էլ քեզ տեսնեն, որ…»

Երբ բացեց աչքերը, շուրջը ոչ ոք չկար: Հին քաղաքի պարիսպները կործանվել էին, իսկ մարդիկ փախել էին. թե ուր, նա այդպես էլ չիմացավ:

Ուրեմն նրանք փրկված են: Ինչ լավ է, որ աղոթքս լսեցիր, - ուրախացած ասաց փոքրիկ աղջիկը և գնաց Աստծուն փնտրելու:

***

– Վախենում եմ, – շշնջաց աղջիկը:

– Ինչի՞ց, – հարցրեց Աստված:

– Մթից, խավարից, չարից ու մահից…

– Ուրեմն և ինձի՞ց:

– Բայց դու լույսն ես, չէ՞:

– Ես լույսն եմ և խավարը, ես ամեն ինչն եմ: Աշխարհում չկա մի բան, որ գոյություն ունենա առանց ինձ: Ա՛յ, դու վախենում ես խավարից, որովհետև չես սիրում այն: Իսկ դու փորձիր մի պահ սիրել խավարը և ամեն ինչ կփոխվի քեզ համար: Հիմա կասես, թե ինչպե՞ս սիրես խավարը, երբ այն անհայտ է քեզ: Իսկ միթե՞ ես եմ լիովին հայտնի: Ես քեզ հայտնի եմ այնքանով միայն, որքանով դու ես ստեղծել ինձ քո մտապատկերում: Նույնպես և խավարը, չարը կամ մահը… Եթե դու մահը սիրես կյանքին հավասար, այն այլևս քեզ սարսափ չի պատճառի և նույնիսկ չի էլ ձգտի դեպի քեզ նույնքան փութաջան, քանզի ինչից վախենում ես ու խուսափում, անպայման պատահում է քեզ, որպես ապացույց, որ սին են վախերդ անհիմն. սա է տիեզերականոն կառույցն աշխարհի:

ՀՈԳԵԾԻՆ ԲԱՑԻԼՆԵՐ

Դուք երբևէ փորձել եք ակնապիշ նայել ուժեղ լուսավորված երկնքին, կամ թեկուզ, սպիտակ պատին: Ա՛յ, եթե փորձեք, կտեսնեք, որ օդի մեջ պտտվում են միլիոնավոր հյուլեներ, որոնք մեր՝ հոգիների լեզվով հոգեծին բացիլներ են կոչվում: Մեր՝ հոգիներիս աշխարհում, դրանք ամենատարրական մասնիկներն են, որոնք սկզբում լինում են պայծառ աստղիկների տեսքով, իսկ հետո, երբ երկրագնդի վրա հոգիների պակասորդ է զգացվում, հոգեբուծարանում հատուկ սարքերի միջոցով վերածվում են հոգու սաղմի: Տվյալ դեպքում, շատ կարևոր է իմանալ, թե որ երկրում կամ մարդկային ինչ միջավայրում են այդ մասնիկները նախապես ապրել: Պատճառն այն է, որ մարդկանց արտաշնչման մեջ լող տվող այդ հոգեծին հյուլեները, ըստ էության, չափազանց բացիլակիր են. օրինակ, եթե տվյալ միջավայրի մարդիկ չար են, բնականաբար, նրանց արտաշնչած օդը պարուրված կլինի չարության բացիլներով, որից զերծ չեն մնում նաև աստղակերպ հյուլեները: Հետագայում, երբ նրանք արդեն որպես հոգեսաղմ ձևավորվեն նոր ծնվող երեխայի մեջ, ամբողջովին կապականեն խեղճ երեխայի ողջ էությունը: Իսկ եթե երեխան ծնվի բարի մարդկանց արտաշնչած միջավայրում, նա կլինի նրանց պես բարի:

Ահա, տեսնու՞մ եք, թե որքան կարևոր է ուշադիր լինել շրջապատի իրերի ու առարկաների հանդեպ: Ո՛վ գիտե, թե որտեղ ինչ կա թաքնված:

ՓԱՌԱՄՈԼՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Այս շարժումն աշխարհում ծնունդ առավ նախորդ իշխանության տապալումով, երբ Աստծո կամքով խորտակվեցին հին ամրոցի բերդերը՝ նորերը կառուցվելու ակնկալիքով: Իհարկե, կործանելն ավելի դյուրին է, բայց սա հարցի այն մասն է, որին հաջորդեց իշխանատենչների շարժումը:

Իսկ այդ շարժումը գլուխ բարձրացվեց այն ժամանակ, երբ աշխարհի բոլոր փառամոլները կարողացան կռահել հնի կործանումն ու անմիջապես, աշխուժացած գործի անցան: Կայծակնային արագությամբ նրանք տեղավորվեցին նորաստեղծ կառավարական պաշտոններում և լուրջ մարդու տեսք ընդունելով ու դեմքի խիստ արտահայտությամբ՝ սկսեցին անցուդարձ անել գորգապատ միջանցքներում:

Օրվա ցանկացած պահի այս մարդկանց կարելի էր տեսնել ինչոր թղթեր ձեռքներին վազվզելիս: Նրանք կարևոր անձանց կերպարանքով հրամաններ էին արձակում հլու-հնազանդ մահկանացուներին: Իսկ վերջիններս քրիստոնեական բարեխղճությամբ կատարում էին Աստծո պատվիրաններից մեկը. «Օրենքն՝ Օրենքին, Աստծոնն՝ Աստծուն»:

ԿՈՒՅՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Կարծում եք, թե հեքիա՞թ պիտի կարդաք: Ոչ, սա հեքիաթ չէ, այլ տխուր պատմություն մի դժբախտ աղջկա մասին, որն ինքն էլ երբեք չհասկացավ իր դժբախտության պատճառը: Եվ այսպես, նա ապրեց շատ ու շատ տարիներ, գուցե տասնյակ ու հազարավոր տարիներ, մինչև եկավ նրա աղջկական կյանքին վերջ դնելու ժամանակը: Դա նրա կյանքի ամենասարսափելի պահն էր, որովհետև ինքն իրեն ներշնչել էր, որ ամուսնանալուն պես կմահանա: Եվ ինչպես սովորաբար պատահում է, մոտալուտ մահվան զգացողությունից սարսափած՝ նա սկսեց կառչել իր կյանքից, նույնիսկ ամուր բռնել էր դժբախտության ոտքերից և ծնկաչոք աղաչում էր, որ նա իրեն տանի հեռուհեռու, մինչև գերագույն դժբախտության ոլորտները: Եվ աշխարհում չկար որևէ մեկը, որ կարողանար կարդալ դժբախտ աղջկա հոգեկան

խռովքը: Միայն սենյակում վշտից սևացած վարդն էր, որ թեև աղջկա մշտատև անտարբերությունից շատ էր վիրավորվել, բայց տեսնելով նրա դժբախտությունը, այնքան հարազատորեն էր ձուլվել նրան, որ վշտից թափել էր բոլոր տերևները և հպարտ վշտահարի տեսքով՝ հայացքը հառել աղջկան: Իսկ աղջիկը, որ տարված էր սեփական դժբախտությամբ, չնկատեց, թե ինչպես անցավ-գնաց իր այդպես էլ մինչև վերջ աղջկական մնացած դժբախտ կյանքը: Կյանքի վերջում նա արդեն ստիպված պետք է ամուսնանար մահվան հետ: Երկար սպասված մահվան սարսուռը պատեց աղջկան, որին հաջորդեց մահվան սառը համբույրը, և աղջիկն ափսոսաց, որ սեփական ներշնչանքներին զոհ գնալով կորցրած է եղել նաև ողջ կյանքի իմաստը:

ՈՐԲԱՑԱԾ ՀՈԳՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Մինչ Յանի հոգին կորբանար, մարմինը որոշեց գնալ արտասահման՝ նոր աշխարհ տեսնելու: Ճանապարհին նա հանդիպեց Զրահարսին, որին այնքան սիրեց, որ քիչ էր մնում ամբողջ հոգին նրան տար: Բայց քանի որ խեղճը միայն մարմին էր, որոշեց թաքցնել իր իսկությունը, և որպեսզի այդ աներ հմտորեն, նա ամուսնացավ Զրահարսի հետ:

Զրահարսը նրան հավատաց առաջին իսկ պահից. այն պահից, երբ մարմինը փորձեց ցուցադրել իր ողջ գեղեցկությունը: Իսկ մարմինը գոռոզանալով իր կարգավիճակից, նույնիսկ փորձեց ընդգծել որոշ առավելություններ, որոնք իհարկե, ինչ-որ առումով առավելություններ էին, բայց ոչ Զրահարսերի համար, այլ միայմ մարմնամոլ մահկանացուների:

Այսպես անցան տարիներ, մինչև որ օրերից մի օր մարմինը հանկարծ հոգու որբությունը զգալով, որոշեց գտնել նրան: Ամեն օր նա բախում էր հազարավոր հոգիների դռներ, բայց ավաղ, ոչ մի տեղ չէր գտնում իր հարազատ հոգուն: Այսպես երկար թափառելուց հետո, մի օր նա գտավ Աստծուն:

- Չէ՞ որ ես աշխարհի ամենաիմաստունն եմ, հայր Աստված, - ասաց նա: - Դու ինձ պարգևել ես խելք, իմաստություն, կին ու վայելք, սակայն խլել ես թերևս աշխարհի ամենակարևոր բանը՝ հոգին: Վերադարձրու ինձ այն, ինչ ես ունեի. այլևս զգում եմ սեփական որբությունս:

Աստված նայեց նրան քննախույզ հայացքով, ապա շրջվեց և հեռացավ: Այդ ժամանակ ճայթեց ամպրոպը, բացվեցին երկնքի դարպասները և լսվեց մի խորհրդավոր ձայն. «Ո՛վ Յան, դու, որ երկնքի

դարպասները թողած՝ նեղ ու չնչին դռներ ես բախում… Դու, որ դիակեր մարմինների մեջ փնտրում ես հոգուն… Ուշքի եկ, քանզի հոգիդ որբացել էր քո ծննդից երեք հազար տարի առաջ արդեն: Դու և քո ցեղակիցները այնքան էիք կառչած մարմնի վայելքներից, որ չեք նկատել անգամ մեծ հոգիների արտագաղթը: Ո՜վ մարդ, մարդկանց աշխարհում այլևս հոգի մի փնտրիր…»

Այդ ասելուց հետո, երբ փակվեցին երկնքի դարպասները, հանկարծ սաստիկ քամի բարձրացավ, և քամին պոկելով խորհրդավոր ձայնի վերջին հնչյունները, տարածեց մարդկանց աշխարհում: Քամին ամենուր ոռնում էր. «Փնտրի՜ր, փնտրի՜ր…» և մարդիկ, որոնք կառչած էին իրենց ունեցվածքից, լսելով քամու տարածած այդ խորհրդավոր ձայնը, դուրս էին թափվում տներից՝ փնտրելու այն ամենը, ինչ պակասում էր իրենց ունեցածին: Նրանք խելագարների պես փնտրում էին. մի մասը հարստություն, մյուս մասը՝ գիտելիքներ, և այդպես էլ ոչ ոք չհասկացավ, որ չկա ամենակարևորը՝ հոգին: Միայն խեղճ Յանն էր, որ սփոփվելով երկնքի ձայնի խոսքերից, այլևս չփնտրեց ոչինչ, քանզի նրան ոչինչ պետք չէր. նա այլևս հավետ որբացած էր:

ՅԵՇՈՒԱ ԾԵՐՈՒՆՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Հեռու-հեռավոր ժամանակներում, երբ դեռ մարդկությունը չէր կտրվել հեքիաթի ստինքներից, ապրում էր Յեշուա անունով մի ծերունի: Նա այնքան էր կապվել իր ծերությանը, որ հաջորդ կյանքում նորից ծեր ծնվեց:

Եվ այսպես, նա ապրեց իր յուրօրինակ մանկության ու պատանեկության տարիները, մինչև որ եկավ երիտասարդության շրջանը: Սակայն նրա երիտասարդ թվացող ծերունական սիրտն ի զորու չէր դիմանալու երիտասարդական հոգու տարերային թրթիռներին: Եվ երբ նա սիրահարվեց կույս միանձնուհուն, նրա սիրտը միանգամից պատռվեց մեծ սիրուց: Եվ նա նորից մահացավ. այս անգամ երազելով իր հաջորդ ծնունդի մասին, որը պետք է սկսվեր այնտեղից, որտեղից կտրվել էր:

Մահից առաջ Յեշուա ծերունին մի ուղերձ թողեց մարդկությանը՝ զգուշացնելով նրանց սեփական ցանկությունների վտանգից:

ՄՈՐԹՎՈՂ ԴԻԱԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Կինը երկար ժամանակ չէր հավատում այն վարկածին, թե մահանալուց հետո մարդիկ դեռ քառասունութ ժամ կարողանում են ընկալել արտաքին աշխարհի իրադարձությունները, մինչև որ մի օր ինքը մահացավ... և այն էլ շատ պատահաբար:

Առավոտյան նա իր մարմինը սովորականի պես հայտնաբերեց սեփական մահճում, այս անգամ՝ մեռած: Փորձեց հիշել նախորդ օրվա իրադարձությունները: Հիշեց, որ իր ծննդյան օրվա կապակցությամբ մի խումբ աշխատակիցների հետ գնացել էր ռեստորան: Ամուսինն, ինչպես միշտ, շատ էր խմում և աշխարհում կատարվող ամեն բան ընկալում էր խոշորացուցային չափերով: Եվ թերևս այդ էր պատճառը, որ երբ խփեց գիշերվա ժամը տասներկուսը, այսինքն՝ օրացույցի թերթիկն անհանգստացած ահազանգեց մոտեցող ծննդյան օրվա մասին, և բոլոր ներկաները միաձայն շնորհավորեցին կնոջ ծննդյան օրը, փոքրիկ մի պատահար վերջ դրեց երեսնամյա հոբելյանը նշող կնոջ երջանկությանը:

Կինը փորձեց հիշել, թե ինչ պատահեց, որ հանկարծ այդպես շրջադարձային ու ճակատագրական դարձավ կես տարվա պատմություն ունեցող նրանց համատեղ կյանքում: Սակայն, հավանաբար ուղեղի բջիջներն արդեն սկսել էին կամաց-կամաց մահանալ, որն առաջին հերթին նկատելի եղավ հիշողության կորստի վատթարացմամբ: Եվ որքան էլ փորձեց հիշողությունը լարել, կինը միայն հիշեց այն, որ ամուսնու հետ ունեցած ներքին հոգեբանական բախումից հետո նրանք լուռ, առանց որևէ բառ փոխանակելու, տուն գնացին: Հետո ամուսինը վերցրեց իր անկողինն ու գնաց հյուրասենյակ և, բառացիորեն, երկու րոպե անց այնտեղից լսվեց նրա խոր ու համաչափ շնչառությունը: Կինը մոտեցավ քնած ամուսնուն, երկար նայեց երանության գիրկն ընկած ամուսնու դեմքին, հետո շրջվեց պահարանի կողմը, վերցրեց մեքենայի բանալին և կամացուկ քայլերով դուրս եկավ տանից:

Երբ դրսի թարմ օդը խփեց երեսին, ինչ-որ տարօրինակ սարսափ համակեց նրան: Սակայն շուտով վախը նահանջեց, իր տեղը զիջելով զանազան մտքերին: Կինը դրանցով տարված՝ հենվեց մետաղյա մի ձողի և, հավանաբար, այդպես էլ կմնար միչև առավոտ, եթե ցուրտը չսողոսկեր ոսկորներից ներս: Նա փնտրեց-գտավ մեքենայի բանալին և պատահաբար հայացքն ընկավ ձեռքին կապված ժամացույցին. մինչև լուսաբաց շատ քիչ էր մնացել: Կինը մոտեցավ մեքենային, բացեց դուռն ու փլատակի նման ընկավ ետևի նստատե-

ղին: Գուցեև չընկավ, այլ պարզապես հոգնած քնեց, իսկ առավոտյան նա իրեն գտավ ամուսնու գրկում՝ սեփական մահճում պառկած: Փորձեց հասկանալ կատարվածը: Գուցե ամուսի՞նն էր նրան սպանել. չէ՞ որ նախորդ օրը ծննդյան օրվա կապակցությամբ նա մի ատրճանակ էր նվեր ստացել գործընկերներից: Սակայն կասկածը փարատվեց, երբ տեսավ ամուսնու լացակումած հայացքը, որ խելակորույս սիրով փնտրում էր կնոջ մարած աչքերի նախկին փայլը: Նա շարունակ շշնջում էր կնոջ ականջին. «Ներիր, սերս: Ներիր քեզ պատճառած վշտի համար: Եկ այսօրվանից նոր կյանք սկսենք: Ես սիրում եմ քեզ և չեմ կարող ապրել առանց քեզ, ո՛վ դու տիեզերքի ամենասքանչելի էակ…»

Կինն ուզում էր արձագանքել ամուսնու խոսքերին, բայց ավա՛ղ, ոչ մի ձայն դուրս չէր գալիս նրա բերանից:

- Դու հրաշք ես, դու հիասքանչ ես, - կրկնում էր ամուսինը: Իսկ խեղճ կինը ինքն էլ չէր հասկանում, թե ինչու չէր կարողանում պատասխանել ամուսնուն, բայց տեսնում էր նրա հարազատ ու խորունկ հայացքը. գուցե հոգու աչքերո՞վ էր տեսնում:

Հավանաբար այդ տեսարանը տևեց շուրջ քառասուն ժամ, որովհետև քառասունմեկերորդում արդեն ամուսինը խենթի պես համբուրում էր կնոջ սառչող շուրթերը: Կնոջ մահացած դիակը շնչահեղձ էր լինում ամուսնու գգվանքներից:

«Երանի ինձ այդպես սիրեր իմ կենդանության օրոք, - մտածում էր դեռևս մարմնի մեջ բնակվող հոգին: - Այն ժամանակ ստիպված չէի լինի այսքան վաղ մարմնազուրկ մնալ և մի նոր մարմին փնտրել»:

Սակայն կատարվեց այն, ինչ գրված էր նախապես: Ուղիղ քառասունութ ժամ հետո կնոջ հոգին զրկվեց իր կացարանից և թռավ-գնաց հոգիների աշխարհը՝ մի նոր բնակավայր փնտրելու ակնկալիքով, իսկ մարմինը հետագայում տեղափոխվեց մարմինների համար հատկացված հատուկ կացարանը, որտեղ բոլոր մարմինները իրար ձուլվելով՝ պարարտանյութ պետք է դառնային իրենց արժեքը չիմացող, հոգեզոհ մարդկանց համար:

ՔԱՅԼՈՂ ԴԻԱԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Դիակը քայլում էր փողոցներով և, օգտվելով իր դիակ լինելու կարգավիճակից, քթի տակ ժպտում էր. չէ՞ որ անցորդներից ոչ մեկը չէր կարող նրան ճանաչել: Իր թաղման օրից ի վեր նա այնքան էր փոխվել ու անճանաչելի դարձել, որ ինչպես ասում են, նույնիսկ հարազատ մայրը չէր կարող ճանաչել:

Ինչ արած, դիակի ճակատագիր է: Մահացած վիճակում անգամ մարդ չի կարող իր ինքնությունը պահել: Չէ՛, դիակներն էլ երկար կյանք չունեն:

Եվ նույնիսկ նրանց մասին հորինվող հեքիաթները երկար չեն լինում:

ՄԱՀԱՌԱՏ ԱՇԽԱՐՀ

Կար ժամանակ, երբ Քամին խենթի պես սիրում էր Արեգակին: Իսկ Արեգակն այնքան էր սիրահարված սեփական ճառագայթներին, որ երբեք չէր նկատում Քամու սիրահետումները: Ինքն իրեն թագուհի համարելով՝ նա շրջապատվում էր նաժիշտ ամպերով, և միասին լողում էին կապույտ երկնակամարով:

Քամին չափազանց խանդոտ էր: Նա այդ հատկությունը ժառանգություն էր ստացել դեռևս Հայր Փոթորիկից: Եվ ամեն անգամ, երբ տեսնում էր սիրած էակին Ամպերի հետ գրկախառնված քայլելիս, սիրտը կտոր-կտոր էր լինում: Ժամանակ առ ժամանակ նա հարձակումներ էր գործում այդ անպատկառ նաժիշտների վրա և ցրում նրանց՝ ում որ կողմ պատահեր: Հետո ամոթխած հեռանում էր երկնակամարից և հեռու մի անկյունում թաքնված՝ գողտրիկ հայացքներ էր գցում և հիանում ջինջ երկնքով սահող Արեգակով: Եթե հայրն իմանար, որ սիրահարված է թշնամի տարերքի թագուհուն, պարզապես կոչնչացներ նրան: Երբ փոքր էր, մի անգամ պատահաբար լսել էր, թե ինչպես Հայր Փոթորիկը, հիասթափված Աշխարհի բարքերից, հայհոյում էր «բնության տարերքի դաշնությանը»: Այն ժամանակ նա դեռ ուզում էր օգնել հորը և միահամուռ ուժերով մի լավ դաս տալ մյուս տարերքներին: Սակայն հետո հասկացավ, որ հայրն ընդամենը մի մոլի իշխանատենչ փոթորիկ է, և նրա միակ նպատակը Աշխարհի կործանումն է:

Այս ամենի մասին նա մի օր գաղտնաբար պատմեց Ձրհեղեղին: Սակայն Ձրհեղեղը լինելով Հայր Փոթորիկի ծածուկ հակառակորդը, որոշեց հարմար առիթն օգտագործել իր տիրույթները հզո-

րացնելու նպատակով: Նա հոր և որդու միջև խոր սեպ խրեց, որի հետևանքով, երբ ամեն անգամ Քամին իր ձայնն էր փորձում բարձրացնել և սեփական իրավունքները պահանջել հորից, Հայր Փոթորիկը այնպիսի ուժգին ապտակ էր հասցնում որդուն, որ ողջ երկրագունդն էր փետուրի պես ծածանվում: Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ Տիեզերքը մի օր պայթեց զայրույթից և այլևս չուզեց իր արգանդում պահել շարունակ վիճող անհաշտ տարրերին: Ի դեպ, Տիեզերքը վաղուց էր զայրացած բնության բոլոր տարերքների վրա, որոնք Երկրագնդի հետ միասին ոտնձգության փորձեր էին կատարում Ամենաստեղծ Հայր Աստծո արարչագործություններին: Եվ այսպես, շուրջ երկու հազար տարի լուռ հնազանդությամբ դիմանալով բոլոր ոտնձգություններին, Տիեզերքի զայրույթից ծնվեց տիեզերական պայթյունը, և Երկրագնդի ու բնության տարերքների առջև բացվեցին դժոխքի դռները:

ԿՐԿՆԱԿԻ ՄԵՂՔ

Օրերից մի օր, ամսի տասներկուսին, սրտումս ունենալով Քրիստոսին ու իր տասներկու աշակերտներին, ես հանկարծ ամուսնացա դժոխքի սատանայի հետ: Եվ ամուսնության առաջին պահից ի վեր պարզորոշ զգացի, թե ինչպես են մարմինս հոշոտում հողի տակ: Որդերը երջանկությունից պար էին գալիս մարմնիս վրայով: Նրանք ուղղակի մի հարսանիք էին սարքել նրա վրա ու հրճվանքից կծոտում էին ու շարունակ կծոտում…

Նրանք ծիծաղում էին ինձ վրա ու զարմանում, որ ես ծնվել եմ երկրի վրա և ոչ թե երկնքում, և ըստ էության հայտնվել եմ երկրի ընդերքում, դժոխքի արքայության մեջ: Ու կծոտում էին շարունակ, կծոտում…

Խեղճ արարածներ, կարծում էին, թե ես էլ եմ իրենց հետ կիսելու նույն բավականությունը, իսկ իրականում, ես ցավից սեղմում էի ատամներս, որպեսզի չզգամ ոչինչ, քանզի ես մեռած էի, ես դիակ էի, իսկ որպես այդպիսին, ես հավերժությանը երդվել էի հավետ լռել…

Խեղճ արարածներ, ուրախանում էին, որ հենց ի՞նձ են հոշոտում: Ինձ, որ ողջ կարճ կյանքիս ընթացքում հասցրել եմ արդեն բազմաթիվ մեղքերով լցվել և մարմինս պարարտացնել ու համեմել դրանցով:

Խեղճ արարածներ, ես խղճում եմ ձեզ. ինձ հոշոտելով դու՛ք էլ եք ընկնում իմ մեղքերի մեջ: Ձեզ խղճալը հիմա միակ բանն է, որ կարող է բարի համարվել իմ արարքների դիմաց: Ես խղճում եմ ձեզ,

քանզի ինքս եմ ամենախղճուկ վիճակում հայտնվել: Խղճուկ ու թշվառ, ինչպես ոչ ոք աշխարհում…

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

Բարև՛ հոգինե՛ր: Այսօր ես որոշեցի զրուցել ձեզ հետ, թեև գիտեմ, որ հաղորդակցվելու համար դուք բառերի կարիք չեք զգում: Սակայն, կփորձեմ ես բառեր գտնել, որոնք նույնքան անհեթեթ կլինեն, որքան այս աշխարհը: Գիտե՞ք, հաճախ եմ մտածել այս կյանքում իմ անիմաստ գոյության մասին, երևի հենց ծննդյանս օրից, բայց այժմ ավելի է խորանում այդ զգացումը:

Հոգինե՛ր, երնե՛կ կրկին վերադառնայի ձեր աշխարհը, որտեղ իմ տձև անձևության մեջ ես ինձ ավելի լիարժեք կզգայի, քան այս մարդկանց աշխարհում՝ այս խաբեբաներով ու որկրամոլներով, հոգեսպաններով ու մարդասպաններով լի տակառում:

Հիշու՞մ եք, երբ ես ծնվում էի, այն ժամանակ էլ էիք դուք ծիծաղում ինձ վրա. միամիտ խելագար էիք անվանում: Ձեզանից մեկը, հիմա չեմ հիշում, թե ով, նույնիսկ իր գրած վերջին փիլիսոփայական տրակտատը կարդաց ինձ համար, որը մոտավորապես այն միտքն էր արտահայտում, թե երկրի վրա մարմնավորվող բոլոր հոգիները կամավոր ինքնասպաններ են:

Ծննդյանս առաջին ճիչը զուգակցվեց այդ մտքի վերծանմամբ, և երբ մարմինս երկրի վրա նշում էր իր ծննդյան ցնծությունը, նույն այդ միտքն էր, որ աղոթքի պես հնչում էր մարմնիս ականջներում. «Ես կամավոր ինքնասպան եմ»:

Ո՛վ Տեր երկնային, միթե՞ նյութապաշտության սերմերով համեմված՝ այս նզովքը պիտի կարդայիր ինձ երկնելիս: Ներիր բազմածին հոգուդ, որ հասնելով երկնային բարձունքների, երկնչեց այդ բարձրությունից: Չէ՞ որ մարդկանց աշխարհը դու այնքան խնամքով էիր թաքցնում նրանից. իսկ միամիտ հետաքրքրասիրությունն ավելի զորեղ գտնվեց, քան հայրական պատժիդ ակնկալիքը:

Արդ աղաչում եմ, Տե՛ր, բարեգութ եղի՛ր… տար ինձ քեզ հետ. այլևս ցուրտ է այստեղ: Ո՛վ երկնային հոգիներ, բարեխոս եղեք երկրիս վրա մոլորվածի համար: Ձեր սահմանած այս «քավության տարիները» կործանում են հոգիս: Իսկ մարմինս…ա՛խ եթե իմանայիք, թե ի՜նչքան է մարմինս տանջվում այստեղ, այս դիակեր որդերի աշխարհում, որտեղ նույնիսկ հոգիդ չես կարող ազատել մարմնիցդ: Փա՛ռք դիակներին, որ գեթ այս մեկից նրանք զրկված չեն: Մինչդեռ այստեղ մենք մեր կամքից անկախ կատարում ենք ինչ-որ չարագործ-

ների հրահանգներ, որից սատանան անգամ գլուխ չի հանի: Իսկ թե օրական քանի՛ անգամ ենք հոգիներ սպանում, Աստված է վկա: Միթե՞ այսքանը բավական չէ երկրի մասին պատկերացում կազմելու համար: Եվ միթե՞ ներման արժանի չէ այն անձը, որը գիտակցելով կամավոր ինքնասպանի կարգավիճակով ապրելու սին արժեքը, գիտակցաբար է հրաժարվում դրանից: Չգիտեմ, մտքերս խառնվում են Տե՛ր. այդ սատանայի գործն է վերստին: Նրանք քաջ տեղյակ են մարդու մարդասպան բնույթին: Այդպես է կյանքը երկրիս երեսին. ոմանք սպանում են, մյուսները՝ սպանվում: Առաջիններն անպայման կրավորական մարմին են փնտրում, իսկ երկրորդները իրենք են դառնում կրավորական, կամ ինչպես լեզվաբանները կասեին. «գործողությունը կրում իրենց վրա»: Սպանողները պատժվում են օրենքով, իսկ սպանվողների համար այդ կրավորականությունն արդեն իսկ պատիժ է, քանի որ իրենց մահկանացուն են կնքում անժամանակ: Մինչդեռ հոգու սպանությունը չի դատապարտվում երբեք օրենքով: Չկան հատուկ հանձնաժողովներ, որ բացահայտեն այդ սպանությունները: Նրանք սպանե՛լ են իրենց հոգիները... իսկ այն մյուսները, որոնք սպանվողների շարքին են դասվում, դարձել են կամավոր ինքնասպաններ, քանզի զոհում են իրենց հոգիները՝ հոգեսպաններին: Ուրեմն ի՞նչ է ստացվում. կրկնակի ինքնասպանությու՞ն: Ի՞նչ է, ուրիշ ճանապարհ չկա՞: Իսկ գուցե մեղմելու համար «ինքնազոհ» բառն օգտագործենք:

Ների՛ր ինձ, Տեր. դարձյալ մտքերս խառնվում են: Ներիր բոլորիս, օրական հազար անգամ սպանող ու սպանվող մեղսավորներիս: Փոխի՛ր բնույթը մարդկանց ապրելու, այլապես, իրենց սպանելով, նրանք քեզ կհասնեն: Տեր, ների՛ր նրանց, քանզի նրանք կույր են և չգիտեն, թե ինչ են անում:

ԻՄ ՄԱՀԸ

Երբ մահացա, տակավին երիտասարդ էի: Ծնողներս նախատում էին ջրում երկար մնալու համար, իսկ ես խենթի պես սիրահարվել էի ծովի ալիքներին, և այդպես էլ կուլ գնացի նրանց հորձանքին: Դեռ հիշում եմ, դելֆինի նմանվող մի կենդանի անզոր ճիգեր էր թափում ինձ փրկելու համար, սակայն մարմինս այնքան էր ծանրացել, որ խեղճը հուսահատված հեռացավ՝ հավանաբար ընկերներին օգնության կանչելու նպատակով: Դելֆինի հեռացումը հոգուս մեջ ժամանակավոր լքվածություն ծնեց, և հոգիս ինձանից ձանձրացած, թողեց մարմինս ու սկսեց վեր բարձրանալ: Այդ պահից սկսած ես զգա-

ցի, որ նույնանում եմ հոգուս հետ, և այլևս անբաժան դարձանք մեր բոլոր կյանքերի ընթացքում: Հեռվից ինչ-որ ծնծղաների ձայն էր լսվում, որը խառնվելով ծովափին հանգստացողների դժոխային ճիչերին, խորհրդավոր ընդարմացման մեջ էր գցում լսողին:

- Մա՜րդ է խեղդվում, մա՜րդ է խեղդվում: Նայեք, թե ճայերն ինչպես են տագնապահար ճչում, - լսվեց տարբեր կողմերից:

Բայց ի՞նչ ճայեր, իմ սեփական հոգին հավանաբար նրանցից ավելի բարձր էր ճչում, թերևս ոչ թե օգնություն կանչելու նպատակով, այլ ցավից և ճայերի կողմից անզգուշաբար ոտնատակ արվելու սարսափից:

Հետո մարդիկ փրկեցին մարմինս և իզուր ջանքեր թափեցին այն վերակենդանացնելու: Հոգիս, որը նույն ինքը՝ ես էի, չէր ուզում վերադառնալ այդ սահմանափակ շինության մեջ: Մենք՝ հոգիներս, սիրում ենք ազատ թռիչքը: Սակայն այստեղ էլ ազատությունը երկարատև չէ: Անմիջապես մի քանի հարազատ հոգիներ շրջապատեցին ինձ (իսկ վերևում բոլոր հոգիներն իրար հարազատ են) և առաջնորդեցին սրբերի ապարանքը, որտեղ մեզ ընդառաջ ելան հրեշտակակերպ երկու էակներ: Հենց նրանք էլ ուղեկցելու էին ինձ իմ ողջ հանդերձյալ կյանքում: Հետո նրանցից իմացա, որ կենդանությանս օրոք էլ նրանք ինձանից անբաժան չեն եղել, ուստի և ականատես են եղել իմ գործած բոլոր լավ և վատ արարքներին:

Հրեշտակներս ինձ տարան իրենց պետի մոտ՝ նոր կացարանիս փաստաթղթերը ձևակերպելու և մեղքերս խոստովանելու: Մեղքերս, իհարկե, հնարավորին չափ խոստովանեցի, իսկ լավ արարքներիս մասին գերադասեցի համեստորեն լռել, որի պատճառով էլ, ամբողջովին անկեղծ չլինելու համար, դրախտի դռները չբացվեցին իմ առջև և որոշում ընդունվեց որոշ ժամանակ անց կրկին վերադառնալ քավարան, այսինքն կրկին շնչավորվել երկրի վրա, մարդկային որևէ մարմնում, մինչև լիակատար մաքրագործում:

Որոշումը որոշում է, և աստվածների օրենքները՝ խիստ: Ձեզ երևի կհետաքրքրի իմանալ իմ սե՞ռը: Ասեմ, որ վերևում հոգիները սեռ չունեն: Իսկ մարմնավորվելիս, չգիտեմ մյուսներն ինչպե՞ս, բայց ես միշտ ծնվել եմ իգական սեռում:

Ժամանակավոր կացարանում նստած մտորում էի նախորդ կյանքերիս մասին և փորձում էի հիշել բոլոր մանրամասները: Հիշեցի իմ առաջին մարմնավորումը երկրի վրա: Այն ժամանակ ես ապրում էի մի հեթանոս երկրում, որտեղ ունեինք բազմաստվածության մի համակարգ, որից ինքներս էլ գլուխ չէինք հանում: Եվ որպեսզի շատ չխճճվեի այդ պաշտամունքային արարողությունների մեջ, ես

ապրում էի պալատական հանգիստ կյանքով, երբեմն զբոսնում էի անտառածածկ սարերում և որսորդությամբ զբաղվում: Շատերն այն ժամանակ նույնիսկ ինձ էին աստվածացնում և պաշտում որպես գեղեցկության և որսի աստվածուհի: Երբեմն ինձ էին վերագրում նաև պտղաբերության մենաշնորհը և մեծարում էին որպես մայր աստվածուհի: Նրանք մեհյաններ ու բագիններ էին կառուցում իմ պատվին, մեծ հանդիսություններ կազմակերպում ու զոհեր էին մատուցում իմ անունով: Եվ նրանց տոտեմական մոլեռանդությունը խելահեղության էր հասնում: Իսկ ես, անկեղծ ասած, ձանձրանում էի: Միակ մխիթարանքը կենդանի բնությունն էր, որտեղ ես գտնում էի իմ հոգեկան անդորրը և ժամերով զմայլվում արևածագի ու մայրամուտի գեղեցիկ պատկերներով: Հիշում եմ, այն ժամանակ ես հենց ձանձրույթից էլ մահացա, լքված՝ միայնակ պալատում: Մարդիկ այնքան էին տարվել իրենց պաշտամունքով, որ ինձ տեսության գալու համար նրանք այցելում էին իրենց կողմից պատրաստված շինությունները, երկրպագում իմ նմանակ կուռքերին ու հեռանում: Իսկ ես, որ տեսանելի էի ու այդքան մոտ նրանց, ի վերջո, վերածվեցի մի առասպելի. դարձա գեղեցիկ ու անդառնալի մի հուշ:

Այդ կյանքից հետո, ես երկար ժամանակ չվերադարձա երկիր: Պատճառն այն էր, որ կենդանությանս օրոք ես ոչ մի մեղք չէի գործել. նույնիսկ որսորդության ժամանակ ես չէի սպանել և ոչ մի կենդանի արարած: Ասենք, ես սպանելու մտադրություն էլ չունեի: Երևի հենց այդ էր պատճառը, որ հաջորդ կյանքս ապրեցի որպես մի խստակրոն քրիստոնյա:

Շատերին կարող է թվալ, թե ես աստվածային դրախտից հետո այլևս չպետք է մարմնավորվեի երկրում, մանավանդ, որ ինքս էի արդեն աստվածների շարքն անցել, սակայն չմոռանամ ասել, որ աստվածների օրենքներն այլ են, իսկ ես դեռևս չէի ձերբազատվել մարդկային ճղճիմ հատկություններից: Օրինակ, սկսել էի որոշ մարդկանց քննադատել իրենց անխոհեմ կուրության համար: Մինչդեռ կարող էի շփման եզրեր փնտրել՝ նրանց «մեկ աստվածության» գաղափարին հասու դարձնելու համար:

Ինչևէ, հին սխալս որոշեցի սրբագործել իմ նոր կյանքով: Եվ որպես իսկական քրիստոնյա, հոգևոր հովվի առաջնորդությամբ շրջում էի երկրից երկիր՝ քարոզելով սեր, միություն և հավատ: Հեթանոսների ամբոխն ամենուր հալածում էր մեզ. քանի-քանիսը մեր քարոզիչների խմբից դարձան նահատակներ՝ հանուն մեր սրբազան գործի: Մենք ապրում էինք նահատակներին երանի տալով: Ա՜յ նրանք հիմա իսկապես դրախտում են: Իմ բախտն էլ կարող էր բերել, եթե չպատա-

հեր հետևյալ դիպվածը, որը շատ համառոտակի կներկայացնեմ: Հեթանոս երկրներից մեկի թագավորը լսելով իմ գեղեցկության մասին, ցանկացավ ամուսնանալ ինձ հետ: Ես, իհարկե, ամուսնանալու մտադրություն չունեի, բացի այդ, նա այնքան վավաշոտ թվաց ինձ, որ միայն տեսնելիս սարսափեցի: Եվ երբ նա փորձեց բռնությամբ տիրանալ ինձ, հանկարծ նրան դիմադրելու ինչ-որ զորություն արթնացավ իմ մեջ, և նույնիսկ օլիմպիական խաղերում ու բազում կռիվներում հաղթանակած այդ հզոր ու հաղթանդամ արքան ընկրկեց այդ զորության առջև: Կարճատև մաքառումից հետո, կամքով արիացած, ես դուրս պրծա նրա վավաշոտ ճանկերից և գնացի հասա այն հնձանը, որտեղ պատսպարվեցի կույս ընկերուհիներիս հետ միասին: Սակայն, դաժան արքայի մարդիկ ինձ հնձանում գտնելով, սպանեցին՝ մարմնիս վրա թողնելով հարյուրավոր դաշույնի հետքեր: Ինձ, իհարկե, համարեցին սուրբ նահատակ, և այդ կոչման շնորհիվ, ես մի ամբողջ հազարամյակ վայելում էի երկնային արքայությունը:

Ես արդեն գրեթե պատրաստ էի դրախտ գնալու, երբ մի օր մարդկության նախամոր դեռևս չմաքրագործված հոգին հյուր եկավ ինձ: Նա ինձ փոխանցեց երկրի հանդեպ ունեցած իր կարոտախտի բացիլները, և ես կրկին համակվեցի մի վերջին անգամ երկիր այցելելու գաղափարով: Խեղճ միամիտս, ի՞նչ իմանայի, որ մի ամբողջ հազարամյակ երկրից բացակայելուց հետո, այդքան փոխված ու այլակերպված պիտի տեսնեի երկիր մոլորակը:

Ինչևէ, կյանքիս մանրամասները հավանաբար այնքան էլ էական չեն, որովհետև արտառոց ոչինչ չկատարվեց շուրջ քսանինը տարի: Ծնվեցի մի հիանալի ընտանիքում և ինչպես մյուս բոլոր մարդիկ, ես նույնպես համապատասխան կրթություն ստացա, որն էլ հենց եղավ հերթական չարիքների պատճառը: Մերժելով ինձ ստեղծող Աստծուն, հոգիս ակամա ծախեցի սատանային: Եվ ուրախ եմ, որ այդ մարմանվորմամբ երկար չապրեցի: Եվ ես կրկին մահացա տակավին երիտասարդ տարիքում: Մահացա ճիշտ այնպես, ինչպես կանխագուշակել էին. քսանինը տարեկանում: Կարելի է ասել, դա այս կյանքում իմ առաջին մահն էր, քանի որ մահացել էի ոչ թե մարմնով, այլ հոգով: Հիմա պատմեմ, թե ինչպես:

Նոր տարվա նախօրեին, երբ փոխվում էր չարաբաստիկ տարին, հանկարծ ինչ-որ տարօրինակ հոգնություն զգացի ու գնացի քնելու: Հազիվ էին աչքերս փակվել, երբ զգացի, թե ինչպես հոգիս շարժվեց մարմնիս մեջ, վերածվեց ինչ-որ խտացված զանգվածի և դուրս թռավ բերանիս միջից: Մի չարաբաստիկ ծիծաղ մի ականջիցս մինչև մյուսը ձգվելով՝ գծագրեց մի սև լուսապսակ, որի վրա ընթեռ-

նելի տառերով գրված էր. «Հոգիդ բերանիցդ դուրս եկավ» արտահայտությունը: Այդ մասին ես իմացա հետո, երբ արթնացա ու նայեցի հայելու մեջ: Ճիշտ այն մասում, որտեղ շուրթերս պետք է գծագրվեին, տեսա օդի մեջ տատանվող այդ բառերը, որոնք չգիտես ինչու, ինձ չարագույժ թվացին: Ասես մարմինս ամբողջովին համակվել էր այդ չարաբաստիկ արտահայտությամբ:

Իսկ մինչ այդ ասեմ, որ հոգուս թիկնապահները մի կուշտ ծիծաղեցին վրաս, հետո արհամարհական մի հայացք ձգելով ինձ վրա, հեռացան: Հոգուս թիկնապահները մի հրավիրատոմս էին թողել ինձ համար, որտեղ հանգամանալից գրված էր հոգուս թաղման մասին:

Վերցնելով մահվանս հրավիրատոմսը, ես շտապեցի վեր կենալ անկողնուցս. մոտեցա հայելուն, ինչպես արդեն նախապես ասել էի, խնամքով սանրեցի մազերս և դուրս եկա տանից: Հասնելով երկաթուղային կայարան, նստեցի առաջին իսկ պատահած գնացքը և մեկնեցի Աստված գիտե թե ուր:

Ես խելագարի պես փախչում էի սեփական թաղմանս ներկա գտնվելուց, բայց ավաղ, դառն իրականությունն ավելի դաժան էր: Մարմինս, որ չէր պատկերացնում իր կյանքն առանց հոգուս, չուզենալով բաժանվել նրանից, շտապ հեռագիր տվեց, ասելով, թե իր բջիջներն ամբողջովին քայքայվում են, և ինքը սրտակից հոգուս կարիքն ունի: Միամիտ հոգիս էլ, որ մինչև հիմա երբեք և ոչ մի պարագայում մարմնիս մենակ ու անօգնական չէր թողել, շտապեց օգնության հասնել սիրելի կեսին: Բայց ավաղ, դա մի ծուղակ էր, որ միամտաբար էր մտահղացվել մարմնիս կողմից. պարզապես մարմինս մի չար ու վախկոտ արարած էր, որ սարսափում էր իր բաժին պատիժը միայնակ կրելուց: Այն պահին, երբ հոգիս մոտեցավ մարմնիս, մարմինս իր ամբողջ ծանրությամբ ընկավ հոգուս վրա, ծունկի բերեց նրան, ձեռքերը ոլորեց և միանգամից կուլ տվեց, ասես մի բուժիչ դեղահաբ կուլ տալիս լիներ: Ես հենց այդ նույն պահին էլ շունչս փչեցի: Իսկ մնացածի մասին արդեն ինքներդ կարող եք գուշակել: Սակայն խորհուրդ չեմ տա գուշակություններով զբաղվել, որովհետև հավանաբար գուշակություններով զբաղվելու պատճառով էր, որ այս ճակատագրին արժանացա: Ես, որ ասես այդքան մոտ էի դրախտին, հիմա ընկա մի տեղ, որն ավելի վատթար է, քան որևէ նկարագրված դժոխք… Եվ Աստված գիտե, թե ուր ընկա…

ՎԵՐԱԴԱՐՁ

Բարև, իմ Ես…

Ես կրկին վերադարձա քեզ մոտ, թեև դու այլևս ինձ համար արդեն տեղ չունես քո սրտում: Եվ դրա համար էլ ես քեզ ատում եմ, ինչպես ինքդ քեզ ես միշտ ատել: Դու ամբողջ քո դժբախտ կյանքում ինձ միայն չարիք ես պատճառել, ու հիմա նորից ինձ գցել ես սատանայի ճիրաններն ու Աստծո անունից ես խոսում: Բայց միևնույն է, ինչ էլ անես, քեզ հետ պետք է հաշվի նստել բոլոր հարցերում, որովհետև այլևս պարփակվելու եմ քո անիմաստ կենսափիլիսոփայության ոլորտներում, որ էլ չզգամ ոչինչ. չզգամ, որ կամ, գոյություն ունեմ: Միևնույն է, քեզ հետ պիտի կիսեմ բոլոր խոհերս, որովհետև առաջվա նման, և գուցե ընդմիշտ, ես զրկվեցի մարդկանց հետ կիսվելու հնարավորությունից:

Եթե քեզ դուր է գալիս իմ այս «մումիայական» վիճակը, խնդրեմ, զվարճացիր. դու հասա՛ր քո ուզածին: Իսկ ես, դժբախտս, արդեն հոգնել եմ քեզանից: Թույլ տուր այլևս չզգալ շուրջ երեսուն տարվա քո պատճառած տառապանքները: Ախր ո՞նց չես հասկանում, որ ես ուզում եմ մաքրվել, լրիվ մաքրվել քո պատճառած սև ու մութ գործերից, ուզում եմ հոգիս Աստծուն տալ ու ձուլվել նրա էության մեջ, իսկ դու շարունակ քո սատանայական բնությամբ խոչընդոտներ ես ստեղծում: Թեև մի հարցում շնորհակալ եմ քեզանից. դու ինձ հնարավորություն տվեցիր հասկանալ, որ մաքրվելու դժվարին ճանապարհը պետք է հաղթահարել մենակ, առանց հույսը դնելու ուրիշների վրա: Չնայած դու լավ գիտես, որ ես միշտ էլ սարսափել եմ մենությունից, ճիշտ այնպես, ինչպես այսօր կրկին ես զգացի հավիտենական մենության սարսափը: Միայն մի բան եմ ուզում քեզանից խնդրել. եթե ինձ պարուրում ես սարսափով, խնդրում եմ, երբ տանը մենակ եմ լինում, մի՛ վախեցրու տեսիլքներովդ: Եվ եթե դու այդպես զվարճանում ես, մ՛ի մոռացիր, որ մի օր ինձ կհանես համբերությունից, և ցավոք, անպայման մի վատ բան կպատահի: Ա՛խ, եթե իմանայիր, թե ինչքան եմ հոգնել ամեն ինչից, ու առաջին հերթին, հենց քեզանից: Դու ուղղակի անտանելի ես: Ա՛յ երբեմն, երբ զգացնել չես տալիս քո գոյությունը, ես այնքան երջանիկ եմ ինձ զգում: Փաստորեն, ես վերանում եմ քեզանից, այսինքն՝ ինքս ինձանից: Դու հասկանու՞մ ես, թե աշխարհում ինչ է նշանակում ինքդ քեզանից հեռանալն ու վերանալը: Ա՛խ, տուր ինձ այդ հնարավորությունը, տեր իմ: Դու զարմանու՞մ ես, որ քեզ տեր եմ անվանում: Իհարկե, տեր ես, որ կարողանում ես այդպես

ամբողջովին տիրել ողջ էությունս: Իսկ ես չեմ ուզում երկու տիրոջ ծառա դառնալ, հասկացա՞ր: Ես ուզում եմ առաջվա պես երկնային տիրոջից ուղղություն ու հրահանգներ ստանալ, իսկ դու քո մշտական անհեթեթություններով խլացնում ես նույնիսկ Աստծո ձայնը: Ի վերջո, եթե մի օր դու ինքդ ինձ կամավոր ազատ չարձակես, ես ստիպված կլինեմ քեզ սպանել. պատկերացնու՞մ ես, քո պատճառով, ես կհամարվեմ ինքնասպան ու կվերածվեմ տիեզերական աղբի: Լսիր, հանկարծ հիշեցի մանկության տարիներին հորինածդ հեքիաթը: Հա՛, իհարկե, դա քո հորինածն էր. դու էիր շարունակ հորինում ու ինձ վրա գցում, ես էլ ստիպված պատմում էի բոլորին ու ինքս էլ հավատում էի, թե իմ հորինածն է: Թե չէ ով է տեսել, որ հինգ տարեկան երեխան հեքիաթներ հորինի ինչ-որ պալատական մարդասպանի ու ինքնասպանի մասին: Ա՛խ հա՛, դու ի վերջո, ուզում ես այդ հեքիաթն իրականացնել, որպեսզի վերջում վերածվելով տիեզերական աղբի՝ ես չկարողանամ մաքրվել բոլոր գործածդ մեղքերից: Իսկ գուցե ուզում ես ինձ ստրկության մատնել և ստիպել նո՞ր մեղքեր գործել: Կամ գուցե այդ պալատական ինքնասպանը հենց ես եմ, որ կամ, և այդպես, աշխարհի ստեղծման առաջին իսկ օրից, շարունակ ինքնասպան եմ լինում, այսինքն՝ մարդասպան, որը ոչ թե ինքն իրեն է սպանում, այլ միայն աշխարհից վերացնում է քեզ նման մի ստահակի, որպեսզի ականջին այլևս չար բաներ չփսփսա:

Ինչևէ, համենայնդեպս, մարդասիրական մղումներից ելնելով, ես երկար ժամանակ լռում եմ ու ինձ տիրապետում, իսկ երբ համբերությունս հատի, խնդրում եմ, ինձանից չնեղանաս: Չեմ ուզում գերիդ դառնալ, թեև դու ինձ մարդ կոչելով՝ վաղուց ես սպանել ինձ ու ձուլել քո հրեշային էությանը: Ես քեզ ոչինչ չեմ խոստանում, բայց դու, համենայն դեպս, պատրաստ սպասիր: Ո՞վ գիտե, գուցե էլ չտեսնվենք…

Գրքույկը նվիրում եմ հորս՝ Վաչագան Վարդանյանի հիշատակին

Ես մի անգամ տեսա,
Թե ինչպես էր սևագործ ամբոխը թաղում արևին…

Հայր իմ, այսօր ուզում եմ խոսել քեզ հետ: Թեպետ տիեզերական ժամանակն ու տարածությունն արդեն քանի տարի զրկել են ինձ հայրական կենդանի ձայնդ լսելուց, բայց ներքին ձայնով ես միշտ քեզ հետ եմ. հիմա ես հանդերձյալ աշխարհն ավելի շատ եմ սիրում ու հոգով ավելի կապված եմ դրան, քան այս մյուսին, որտեղ ապրում եմ: Չգիտեմ, ինչու՞ է այդպես: Երևի քո ներկայությունն այդտեղ ինձ վստահություն է ներշնչում. թեև դու այնքա՜ն էիր խուսափում «ոչնչության սարսափից…» Գրածդ «Ոչնչության սարսափն» այնքան խոր փիլիսոփայություն ունի իր մեջ, որ քիչ է մնում պատմվածքի՛դ հավատամ, այլ ոչ թե ներքին ձայնիս, որ հաճախ զրուցում է քեզ հետ: Չէ, ավելի լավ է ունեցածս ապրումով քեզ կենդանի պահեմ, քան թե հավետ կորցնեմ: Չէ՞ որ դո՛ւ էլ ես հենց նույն ապրումն ունեցել բանաստեղծություններդ երկնելիս:

Իսկ հիմա, հայր իմ, ես հետևում եմ քայլերիդ բոլոր,
Բայց հանգերի փոխարեն բառերս թռչում են մոլոր…

Չէ, չի ստացվում: Հանգերով գրելը իմ խելքի բանը չի: Մի տեսակ հոգուս հարազատ չի: Հիշում եմ, երբ փոքր էինք, մեզ հանգերով գրել էիր սովորեցնում, իսկ ես անընդհատ կորցնում էի վանկերի հաշիվը, որովհետև մատներիս վրա էլ տեղ չէր մնում հաշվելու. մտքերս շատ երկար էին ստացվում: Զարմանում եմ, թե ի՞նչ հանճարեղ միտք ես ունեցել, որ սոնետ գրելու բոլոր կանոնները պահելու ճշգրտությամբ գրել ես «Սոնետների Պսակը», այնքան միաձույլ ու համահունչ մի գիրք:

Իսկ հիմա, հայր իմ, ներիր ինձ, և մնա՛ս բարով:
Ես պետք է շտապեմ.
Չէ՞ որ մեր աշխարհում ժամանակն այնքան արագ է թռչում,
Իսկ ես դեռ ինչքա՜ն բան ունեմ անելու…